№ 253 ՇԱԲԱԹ, 14 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1909

ԵՐԵՍՈՒՆՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 14 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 253

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 228.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1910 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(38-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 1 ամսվանը՝ 80 կ. և 20 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և միւնոյն ժամանակ 40 կ. նամակադրոշմ։

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիկական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութիւնը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։ Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադր. բլանկի վրա նախկին տպագրված հասցեն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԻՎԱՆՕՎԻՉ ՄԱՆԹԱՇԵԱՆԸ ԻՐ ԶԱՒԱԿՆԵՐՈՎ յայտնում է ազգականներին և ծանօթներին, որ երկուշաբթի, նոյեմբերի 16-ին, հանդուցեալ

ԴԱՐԻԱ ԱԼԷՔՍԱՆԴՐՕՎՆԱ ՄԱՆԹԱՇԵԱՆԻ

մահվան քառասնօրեակին, Վանքի մայր եկեղեցում տեղի կունենայ ՊԱՏԱՐԱԳ և ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ։

Պատարագի սկիզբն է առաւօտ. ժամը 10½-ին, իսկ հոգեհանգստինը՝ ժամը 12-ին։

(շ. կ.) 1224. 2—1

Մանրաշեան Առեւտրական Դպրոցի Տեսուչը

սրանով յայտնում է, որ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ազատ տեղերը մտնելու համար ցանկացողների քննութիւնը տեղի կունենայ նոյեմբերի 19-ին, առաւօտեան ժամը 11-ին։ Ուսման կիսամեայ վճարն է 20 ռուբլի։

(շ. կ.) առ. 1226. 2—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Այսօր, շաբաթ, նոյեմբերի 14-ին տեղի կունենայ

Ընտանեկան երեկոյթ

Երեկոյթին կը նուագեն սաղմոսարներ։ ԱԶԳ.—Հետեւեալ «Ընտանեկան երեկոյթը» երեքշաբթի, նոյեմբերի 17-ին։

1225. առ. 1—1

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՕՆ

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿ. ԹԱՏՐՕՆՈՒՄ

Հայ դերասանական ընկերակցութիւնը երկուշաբթի, նոյեմբերի 16-ին, Յօգուտ Կանանց Որբանոցի Ընկերութեան Անդրկովկասում կը ներկայացնէ

I

Դեղեցկուհու խորհրդաւոր ապաւողը

Կամ

ԲԱՐԻ ԴԱՏԱՒՈՐԸ

Կոմ. 3 գործ., Բիսսօնի, թարգմ. Վ. Տիրացեանի.

II

ՇԵՂՎԱԾՆԵՐ

Դրամատիկական էտիւդ 1 գործ. հեղ. Մ. Մանուէլեանի.

Մասնակցում է ամբողջ խումբը։

Տեղերի գները բարձրացված են։

Սկիզբն ուղիղ ժամը 8-ին

Բեժիսսեօր՝ ա. ՄԱՅՍՈՒՐԵԱՆ

(ու. շ. կ.) (առ.) 1221. 3—2

ՄԱՔԱՌՈՒՄՆ ԹՈՔԱԽՏԻ ԴԷՄ

Թոքախտի դէմ կուռող Կովկասեան Ընկերութեան այսօրվայ ժողովի առիթով մենք կը կամենայինք հրաւիրել մեր ընթերցողների ուշադրութիւնը մի կարևոր հանգամանքի վրա։

Վարակիչ և համաճարակ հիւանդութիւնների շարքում թոքախտը կամ տուբերկուլօզը ճանաչված է այսօր բժշկական գիտութեան կողմից իբրև բուժելի և խուսափելի, այսինքն մի հիւանդութիւն, որ թէև վարակիչ է, բայց հնարաւոր է բժշկվել և նոյն իսկ բոլորովին զերծ մնալ նրանից, խուսափել, եթէ միայն գործադրվեն որոշ ջանքեր և միջոցներ։

Առաջ՝ երբ մինը հիւանդանում էր թոքախտով, նրան համարում էին դատապարտված մահվան և բժիշկները աշխատում էին միայն թեթևացնել նրա տանջանքները։ Այսօր՝ թոքախտով հիւանդացածների համար փրկութեան յոյս կայ և մեծ յոյս, որովհետև այսօր գտել են ապահով միջոցը՝ կուռելու մարդկային ցեղի այդ պատուհասի դէմ և կուռելու շատ մեծ աջողութեամբ։ Եւ կուռում են ոչ թէ դեղերով, ինչպէս առաջ, այլ սանատորիաներով, առողջապահական բուժարաններով։ Ամենագլխաւոր դարմանը, դեղը այդ պատուհասի դէմ՝ մաքուր օդը և առողջապահական պայմաններն են ու գիէտան, ժուժկալութիւնը։ Բայց մաքուր օդ, առողջապահական պայմաններ և ժուժկալութիւն հարկաւոր են ոչ թէ օդը նեխված մեծ քաղաքներում, տներով խնված նեղ ու մութ փողոցներում, հոծ բնակչութեան մէջ, այլ բարձրանդակ, հովասուն և օդասատ տեղերում կառուցված սանատորիաների մէջ, յարմարեցված գիտութեան վերջին խօսքին առողջապահութեան վերաբերեալ։

Այդպիսի սանատորիաներ և բուժարաններ բոլոր քաղաքակիրթ երկիրներում բազմաթիւ են. նրանք կառուցվում են թէ պետական գանձարաններից, թէ հասարակական հիմնարկութիւնների և թէ մասնաւոր բարեգործների առատաձեռն նուէրներով ու նպաստներով։

Դժբաղդաբար, մեր երկրում չը կան այդպիսի սանատորիաներ և բուժարաններ, չը նայելով որ մեր երկրում կան հիանալի վայրեր՝ խիստ յարմար սանատորիաների և բուժարանների համար, ինչպէս Աբաստուման, Կիսլովոդսկ, Շուշի, Դիլիջան, Ծաղկաձոր և այլն։ Եւ դժբաղդաբար՝ թոքախտը սաստիկ տարածված է և մեր մէջ, մանաւանդ Բաղուի գործարաններում աշխատած և գիւղ վերադարձած ու ուսանող մատաղ սերնդի մէջ։

Սանատորիաներ և բուժարաններ ունենալու կարիքը անգին է մեր մէջ։ Ահա մի փրկարար ապարէզ, ուր գործողները կարող են արժանանալ տառապող ու տանջվող մարդկութեան երախտագիտութեանը։

Հարկաւոր է միայն կարեկից վերաբերմունք դէպի մարդկային տանջանքը և ցաւը. հարկաւոր է նախաձեռնութիւն, և մենք հաւատացած ենք, որ կը գտնվեն բարեգործ անձինք, որոնք կը նպաստեն նախաձեռնողներին իրականացնել բարի և փրկաւէտ գործը։

Այդ պատճառով և մենք ողջունում ենք իշխանուհի Մարիամ Թումանեանի նախաձեռնութիւնը՝ կառուցանել մի ժողովրդական սանատորիա թոքախտաւորների համար Աբաստումանում, և յոյս ենք տածում, որ հասարակութեան մէջ կը գտնվեն բարեգործ անձինք, որոնք կրմբնեն, թէ բարեգործութեան ամենալաւ և ամենաարդիւնաւէտ ձեւ՝ մարդկային տառապանքները և տանջանքները թեթևացնող հաստատութիւնների իրագործումն է։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բերլին, 12 նոյեմբերի

Վոլֆին հաղորդում են Նեյրէկից. «Երբ Վիլհելմ կայսրը որսի ժամանակ մօտեցաւ ռուսական սահմանապլխին, ռուսաց սահմանապահ զօրախումբը պատակ դրեց պօրուչիկի հրամանատարութեամբ, որ պատիւ տուեց կայսրին։ Նորին մեծութիւնը պատակին ողջունեց»։ (Հ. Գ.)

Բէլգրադ, 12 նոյեմբերի

Ժամը 2 և 40 րոպէին եկաւ Ֆէրդինանդ թագաւորը և կայարանում ընդունվեց Պեսար թագաւորից, գահաժառանգից, արքաների գործերի մինիստրից և բոլգարական դեսպանատան պաշտօնեաներից։ Փոխադարձ ողջոյններից յետոյ թագաւորները նստեցին բաց կառքը և Ֆէրդինանդի ցանկութեամբ գնացին պալատ ոչ ուղիղ ճանապարհով, այլ ուրիշ փողոցներով։ Բազմամարդ հասարակութիւնը ողջունում էր Ֆէրդինանդ թագաւորին։ Պալատում թագաւորը մանաւոր ունկնդրութեան ընդունեց Պաշիչին։ (Հ. Գ.)

Բէլգրադ, 11 նոյեմբերի

Ֆինանսների մինիստրը սկուպշչինային ներկայացրեց մի օրինագիծ, որով առաջարկվում է կնքել 150 միլիոն ռուբլու փոխառութիւն։ (Հ. Գ.)

Վիէննա, 12 նոյեմբերի

Պատգամաւորների պալատը զօրքերի մշտական քանակը խաղաղ ժամանակ որոշեց 42,000 զինուոր։ (Հ. Գ.)

Լոնդոն, 11 նոյեմբերի

Լորդերի պալատ։ Շարունակվում է ֆինանսական բիլլի քննութիւնը։ Բէնդերբերի արքեպիսկոպոսը յայտնում է, որ նա և եպիսկոպոսները չեն մասնակցել վիճաբանութեան։ Լորդ Բոզբերին խստագոյնս պարսաւում է իր ճառում բիւջէն. ասում է, որ նա, բայց և այնպէս, չէ կար ոչ պաշտպանել լորդ Լէնսդաունի բանաձևը։ (Հ. Գ.)

Լոնդոն, 12 նոյեմբերի

Ֆինանսական բիլլի քուէարկութիւնը տեղի կունենայ հաւանօրէն նոյեմբերի 17-ից ոչ շուտ՝ հոեսօրների մեծ թիւի պատճառով։ (Հ. Գ.)

Վիէննա, 11 նոյեմբերի

Պատգամաւորների պալատ։ Պատճառաբանելով ազգային փոքրամասնութիւններին ապահովելու մասին ուղղված հերթական առաջարկութիւնը, կրամարժը շօշափում է կառավարական ներքին սիստեմը, շարունակելով արտաքին դրութեան հետ, և ասում է. «Նեղելով սլաւոնններին, կառավարութիւնը անկասկած զանվում է գերմանացի անհաշտ տարրերի ազդեցութեան ներքոյ։ Սակայն միջազգային դրութիւնը այնպիսին չէ, որպէսզի մարդ թոյլ տայ իրան յուսահատութեան հացնելու սլաւոններին։ Եթէ մենք, սլաւոն պատգամաւորներս, յիրաւի պետական դատաւորներ էինք, այն ժամանակ ես կը խնդրէի ձեզանից շարունակել այժմեան քաղաքականութիւնը, որը կը սատիպէ սլաւոններին փրկութիւն որոնել կատասարօֆայով։ Սակայն մենք դեռ հաւատում ենք, որ սլաւոնները Աւստրիայում տէր կը կանգնեն իրանց իրաւունքներին»։

Գերմանական կուսակցութեան անդամ Բէրգէլդը յայտնում է, որ գերմանացիները Զեխիայում պահանջում են իրաւահաւասարութիւն չեխերի հետ։ (Հ. Գ.)

Վիէննա, 12 նոյեմբերի

Պատգամաւորների պալատում Բինէրը ճառ արտասանեց, որի մէջ, հերքելով կառավարութեան հասցէին ուղղված կշտամբանքները հակասլաւոնական և հակաչեխական տենդենցիային քաղաքականութեան մէջ, բոլոր կուսակցութիւններին կոչ արաւ միանալ որևէ համաձայնութեան հիմք գտնելու ազգային հարցերի նկատմամբ, ընդդիմացաց, որ բոլոր ճառերի մէջ ցանկութիւն է նկատվում հաշտութիւն կայացնելու բոլոր ազգութիւնների միջև, յայտնեց, որ կառավարութիւնը պատրաստ է այդ ձգտումներին անկեղծօրէն աջակցել։ (Հ. Գ.)

Մադրիդ, 12 նոյեմբերի

Զինուորական մինիստրութիւնը յայտնում է, որ Մելիլիայում բոլոր պատրաստութիւնները տեսված են պատերազմական գործողութիւնների համար, որոնք սկսվելու են մօտիկ ապագայում։ (Հ. Գ.)

Տոկիո, 12 նոյեմբերի

Ֆուկուօկա նահանգում Օնուրա ածխանքերում տեղի ունեցաւ գազերի պայթում։ Առայժմ հաստատված է, որ զոհվել է 15 մարդ։ Ընդամենը հանքերում գտնվում են 228 բանւորներ։ (Հ. Գ

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պոլիս, 11 նոյեմբերի

Ամբողջ 24 ժամ շարունակվում է կայծակը և անձրևը հարաւային խուլ քամու հետ։ Սամսօնի և Դալաթիայի ցածր մասերը մնացել են ջրի տակ։ (Հ. Գ.)

Կ. Պոլիս, 12 նոյեմբերի

Բ. Դրանը լիակատար հանգստութեամբ սպասում են մեծ պետութիւնների պատասխանին Կրետէի մասին ուղղված նոտայի վերաբերութեամբ. status quo-ի պահպանումը առարկութիւն չի գտնի, եթէ միաժամանակ մեծ պետութիւնները խոստանան Կրետէում հաստատել սեփական վճռաբեկ դատարան և արգելել յունական նամակագրոշմները։ Առհասարակ Բ. Դրան յարաբերութիւնները դէպի Յունաստանը զգալի չափով լաւացել են. կրետական հարցը կորցրել է իր սուր կերպարանքը։ (Հ. Գ.)

Վիէննա, 12 նոյեմբերի (ուշացած)

«Կօրրեսպօնդենց Բիւրօյին» հեռագրում են Սօֆիայից, որ Թիւրքաց դեսպանը խնդրել է Պապրիկօվին տալ իրան Պապրիկօվի և Մալինօվի սօբրանիէյում արտասանած ճառերի բնագիրը։

Կառավարական շրջանները չափազանց զգոված են միջադէպից, որ երկպառակութիւն է առաջ բերում Թիւրքիայի հետ։ (Հ. Գ.)

Սօֆիա, 12 նոյեմբերի

Բոլգարական հեռագրական գործակալութիւնը հաղորդում է, որ կառավարութիւնը յանձնել է Սօֆիայի Թիւրքաց դեսպանին նոյեմբերի 5-ի ազգային ժողովի նիստի ստենոգրաֆիական նկարագրութիւնը և Պապրիկօվի ճառի այն մասը, որի մէջ խօսվում է Թիւրքիայի մասին, որով բոլորովին խափանվեց մինիստրի խօսքերը սխալ կերպով մեկնելու հնարաւորութիւնը։ (Հ. Գ.)

Որպէս հաղորդում են Կ. Պոլսից նոյեմբերի 13-ից Բերլինի լրագիրներին, մեծ-վեզիրն ընդունեց ալբանական պատգամաւորութիւնը, որը պահանջում է, որ դադարեցվի ալբանացիների զինաթափութիւնը և Զեվադ փաշան յետ կանչվի Ալբանիայից։

Երիտասարդ-Թիւրքերը մտադրութիւն ունեն հարցապնդում անել Իսմայիլ-Քէմալի պատգամաւորական մանդատի խուզութեան մասին։ Այդ հարցապնդումը պատճառաբանվում է նրանով, որ Իսմայիլ-Քէմալը ապիտացիա է մղում ի նպաստ Գիկկի ալբանական գահի վրա։

Նոյեմբերի 6-ին պատգամաւորների ժողովը կատարեց փոխ-նախագահի ընտրութիւնները. ընտրվեցին երիտասարդ Թիւրքերի առաջարկած Մուստաֆա-Ասիմ և Էլ-Վօստակի պատգամաւորները։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թէհրան, 12 նոյեմբերի

Նոյեմբերի 10-ին Շիրազից-Բուշիր ճանապարհին, Խանէգենան և Դէշտանջին գիւղերի միջև, կաշկայ ցեղի Բայրամվերդիների տոհմի աւազակները յարձակվեցին Բուշիրի ռուսաց գեն.-հիւպատոս Պասէկի կարաւանի վրա, որ վերադառնում էր Բուշիր-Շիրազից, ամառը անցկացնելուց յետոյ, նաև պարսկական 5 առաւարական կարաւանների վրա։ Հիւպատոսի հետ էին 7 ռուս և 5 պարսիկ կօզակներ և 3 զուլամներ հրացաններով. ինքը հիւպատոսը և գեներալ-հիւպատոսարանի քարտուղար Կաղլուբօվսկին զինված էին միայն տրճանակներով։ Հրացանաձգութիւնը տեւեց մօտ կէս ժամ։ Այժերը չափազանց անհաւասար էին և հիւպատոսը ստիպված էր թողնել կարաւանները և, կրակելով, յետ նահանջելիր մարդկանցով դէպի Խանէգենան գիւղի մօտով անցնող գետը։

Սպանվեց ռուս կօզակ Սլէսարէնկօն, վիրաւորվեց մի ուրիշ կօզակ՝ ձեռքից։ Ծանր վիրաւորվեցին 2 պարսիկ կօզակներ և թեթև՝ 2 զուլամներ։ Հիւպատոսարանի կարաւանից սպանվեցին 4 ձիեր, միւս կարաւաններից սպանվեցին 10 պարսիկներ, ի թիւս որոնց Խանէգենան գիւղի տանուտէրը, որ գնում էր կարաւանների առաջից մի քանի պարսիկ տղաների հետ, որոնց մի մասը նոյնպէս սպանվեց։ Պասէկը և Կաղլուբօվսկին անվնաս են, բայց կարաւանը կողոպտվեց. բոլոր իրերը յափշտակվեցին։ Մեծ դժուարութեամբ աջողվեց յետ խլել հիւպատոսարանի արխիվը և դրամարկղը։ Հիւպատոսը վկայում է, որ իր բոլոր կօզակները ցոյց տուին անօրինակելի քաջութիւն։

Սպանված Սլէսարէնկօյի մարմինը բերվեց և կը թաղվի Շիրազում հայոց եկեղեցու բակում։

Դեսպանը ամենալուրջ առաջադրութիւն արեց պարսիկ կառավարութեան, պահանջելով ձեռք առնել անյապաղ կարուկ միջոցներ՝ պատժելու մեղաւորներին և հատուցանելու բոլոր վնասները։ (Հ. Գ.)

Թէհրան, 12 նոյեմբերի

Հէնց որ տեղեկութիւն ստացվեց ռուսական կարաւանների վրա յարձակում գործելու մասին, Շիրազի անգլիական հիւպատոսը մեկնեց դէպքի տեղը բժշկի և անգլօ-հնդկական զինուորական պահակների հետ միասին։ (Հ. Գ.)

Թաւրիզ, 11 նոյեմբերի

Ատրպատականի գեներալ-նահանգապետի այն զօրամասը, որ նշանակված է գործելու Բահլիմ-խանի և շահսէվանների դէմ, մի ամիս կանգ առաւ Սե-

բաբում և վերադառնում է Թաւրիզ։

Թաւրիզի և Արդաբիլի վաճառականները և ապրանք արտահանողները յոյս ունեն, որ շնորհիւ այն հանգամանքի, որ ռուսաց զօրքերը գտնվում են Թաւրիզում և Արդաբիլում, միջոցներ ձեռք կառնվեն բանալու Աստարա-Արդաբիլ, Թաւրիզ-Զուլֆա-Խոյ դիւաւոր առևտրական ճանապարհները։

Սաթթար-խանի Արդաբիլում ցոյց տուած վարմունքը և նրա փախուստը այնտեղից մեծ հարուած հասցրին նրա ժողովրդականութեանը։ (Հ. Գ.)

—

Պարսկական սինիսարութիւնը հէնց նոր բացված մէջլիսի հետ միասին բաւական ծանր գործ ունի կատարելու, այն է խաղաղեցնել պարսկական կանքի ալեկոծված ծովը։ Չէ կարելի ասել, որ նա ձեռք է զարկել այդ գործին առանձնապէս բարենպաստ պայմաններում։ Նախ և առաջ հէնց իրան՝ կաբինէտի մէջ, բացի նրա գլխից՝ Սիպէհդարից, համարեա չը կան քիչ շատ հեղինակաւոր անձինք։ Քանիսները,—օրինակ Նասր-ուլ-Միւլքը,—հրաժարվեցին ընտանձնել սինիստրի ներկայ պայմաններում յիրաւի անշնորհակալ դերը, ուրիշները, որոնք ծանօթ են պետական վարչութեան գործերի հետ, չէին կարող պաշտօնի կանչվել յուզման ժամանակ յետադէմների շարքը դասվելու պատճառով։ Շատ յոյս չէ կարելի դնել և անտրտ մէջլիսի վրա։ Բացի ընդհանուր դժուարութիւններից, որոնք ըմբռնում են երկրի վարչական և ֆինանսական տխուր դրութիւնից, կառավարութիւնը ստիպված է այժմ լուրջ մտածել այն մասին, թէ ինչպէս պէտք է վարվել ֆէդայիների զինուորական ոյժի հետ։ Մի կողմից, ի հարկէ, դրանք «հերոսներ են, որոնք իրանց արիւնով ազատութիւն են ձեռք բերել Պարսկաստանի համար»։ Բայց միւս կողմից, նրանց ծառայութիւնները այժմ ամենին հարկաւոր չեն, և կառավարութիւնը աշխատում է զինաթափ անել նրանց։ Կովկասից եկած հայերի և վրացիների մի յայտնի մասին աջողվեց կամ ոստիկանական ծառայութեան մէջ ընդունել կամ տներն ուղարկել։ Սակայն Ատրպատականի ֆէդայիները չեն ուզում ցրվել, միաբան կանգնած են, որ տուն չեն գնայ, մինչև պարագլուխները հաշիւ չը տան նրանց, թէ ո՞րպէս են ծախսվել շահի դէմ կռիւ մղելու համար հաւաքված խոշոր գումարները։ Ապա դիմումներ է ներկայացնում դէպի Ռուսաստանը բռնած դիրքը։ Ազգայնականները շարունակում են ամեն ասիթից օգուտ քաղել թշնամական ցոյցեր անելու այն բոլորի դէմ, ինչ որ ռուսական է։ Սակայն, որպէս հաղորդում է «Frank. Zeit.» լրագրի թղթակիցը, կառավարութեան և Սիպէհդարի աչքերը աւելի ևս բացվում են, տեսնելով, որ Պարսկաստանում ոչ միայն, ոչինչ չէ կարելի անել Ռուսաստանի դէմ, այլ մինչև անգամ հարեա առանց Ռուսաստանի հօլա գնալ չի լինի։ Ռուսաստանի հետ արդէն բանակցութիւններ են վարվում փոխառութիւն ստանալու մասին։ Ամենից առաջ կառավարութիւնը կը ցանկանար միմիայն 6 միլիոն բուբլի ամենանշանաւոր պահանջների համար։ Աւելի խոշոր փոխառութեան պայմանների մշակումը ի նկատի կայ ապագայում։

ՏԵՆԵՐԻՖԱՅԻ ՀՐԱԲՈՒԽԸ

Մադրիդ, 12 նոյեմբերի

Տեներիֆա հրաբուխը անակնկալ սկսեց անգին քանակութեամբ լաւա դուրս նետել։ Լաւայի մեծագոյն մասը հեղեղի նման նոյեմբերի 10-ին անցաւ դէպի Սանտ-Եագօ՝ տարածվելով 500 մետրի վրա, 200 մետր լայնութեամբ և 10 սաժէն խորութեամբ։ Միւս հոսանքը դիմեց դէպի Տաման և տարածվեց 1200 մետրի վրա։ Երէկ լաւան երեաց Լասմանչասի շրջակայքում։ Գարաչիկօյում զգացվեցին սաստիկ երկրաշարժներ։ Շատ բնակիչներ մեռան անասպրուստ։ (Հ. Գ.)

—

Մադրիդ, 12 նոյեմբերի

Տեներիֆայից ստացված պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, լաւայի հոսանքը տարածվում է դէպի հիւսիս՝ բաժանվելով երկու ճիւղերի, որոնցից մինը ինն ժամվայ ընթացքում հոսեց երեք կիլոմետր տարածութիւն։ Լաւայի մասսաները, որոնք հոսում են Սանտ-Եագոյի և Տասաուրայի ուղղութեամբ, նոյնպէս ընդգրկում են աւելի և աւելի ընդարձակ տարածութիւն։ Ազգաբնակութիւնը շարունակ փախչում է սպառնացող տեղերից։ (Հ. Գ.)

Կ. ՊՕԼՍՈՒՄ ՌՈՒՍԵՐԷՆ ԹԵՐԹ

Թիֆլիսում ստացվեց Կ. Պօլսում նոր հրատարակվող ռուսերէն պատկերազարդ «Ստամբօլսկայա Նօվոստի» շաբաթաթերթի առաջին համարը։

Կ. Պօլսում լոյս են տեսնում շատ լեզուներով թերթեր և հանդէսներ, բայց ռուսերէնը առաջին անգամն է։ Այս նոր շաբաթաթերթի նպատակն է հետաքրքրել Կ. Պօլսի և ընդհանրապէս Արևելքի կեանքին և ծանօթացնել զարգացման գործին։

Խմբագրութիւնը կազմված է թիւրք յայտնի ժուրնալիստ, գրականագէտ և քաղաքագէտ գործիչներից, գլխաւորապէս երիտասարդ թիւրքերից։

Ինչպէս երևում է, Կ. Պօլսում ռուսերէն լեզուով հրատարակվող այս անդրանիկ թերթը խոստանում է լինել հետաքրքրական։

Առաջին համարում զետեղված են թիւրքիայի այժմեան յայտնի գրական ոյժերի՝ Զելալէդդինի, Զաւիդ-բէյի, Եկրէմ-բէյի, Ահմէդ Սայիբ-բէյի և ուրիշների յօդուածները։

Զելալէդդինը մանրամասն նկարագրում է թիւրքիայի այժմեան կացութիւնը և ծանօթացնում երիտասարդ թիւրքերի քաղաքականութեան հետ։

Զաւիդ-բէյն այս համարում զետեղել է իր շարունակելի և այժմէական նշանակութիւն ունեցող «Երիտասարդ-թիւրքերի կուսակցութիւնը և ազգային հարցը» ուշագրաւ յօդուածը, ուր առաջ է բերում երիտ-թիւրքերի կարծիքը ազգային հարցի մասին։ Ինքը հեղինակը իբրև ունիոնիստ, ազգերի միացման կողմնակից, թիւրքիայում մանաւանդ այդ գտնում է շատ ցանկալի և միևնոյն ժամանակ հնարաւոր։ «Մի կողմից համոզված ենք, որ թիւրքիայի երջանկութիւնը իր հպատակ բոլոր ազգերի միութեան մէջ է, բայց միւս կողմից գիտենք, որ ամեն մի ազգ մեզանում ունի իր անցեալը, իր առանձնակի ձգտումները և յոյսերը, ունի իր կուլտուրան և լեզուն»։ Ահա այստեղ են ազգերի միութեան և հաներաշխութեան դժուարութիւնները։ Թիւրքիայի դժբաղդ պատմութիւնը իր ամբողջ ոյժը ազգերի առանձնայատկութիւնների դէմ էր ուղղել և այդ բոլորի մէջ անպատճառ ուզում էր տեսնել այս կամ այն ազգի սեպալաստիզմը։ «Յեղափոխութեան յաջորդ օրը, երբ ամենքս հիացած, յափշտակված էինք, երբ ամենքս, թիւրքիայի ամեն մի ազգ տարված էր միևնոյն գաղափարով, և ամենքին տիրում էր միևնոյն տրամադրութիւնը, մենք, երիտասարդ-թիւրքերս, կարծում էինք, թէ ազգերի տարբերութիւնը և ազգերի մրցումը ի չիք դարձաւ հին բէժիմի հետ և միայն մութ յաւիտենականութեան բաժին դարձաւ... Բայց ճշմարտութիւնը գլուխ հանեց և շատ շուտ ցրեց այդ խափուսիկ երևոյթը»։ Եւ այսպէս Զաւիդ-բէյը բերում է, թէ ինչպէս անմիջապէս պարլամենտական ընտրութիւնների ժամանակ առաջ եկաւ յոյների անվստահութիւնը, այլ և Արաբիայի և Ալբանիայի ապստամբութիւնը ցոյց տուեց «ազգերի միութեան դժուարութիւնը մեր հայրենիքում»։

Զը նայելով այդ դժուարութիւններին, Զաւիդ-բէյն իր յոյսը չէ կորցնում, որ երիտասարդ-թիւրքերի քաղաքականութիւնը կը հանի իր նպատակին և վերջ ի վերջոյ կը լուծէ այդ դժուար հարցը։ Հեղինակը խոստանում է յաջորդ անգամ աւելի լուսաբանել այդ խնդիրը և ծանօթացնել զանազան ազգերի միութեանը նպաստող հանգամանքների հետ։ Այս համարում Ահմէդ-բէյն ունի «Ի՞նչպէս ձեռք բերինք սահմանադրութիւնը» մի լուրջ և ուշադրութեան արժանի պատմական ուսումնասիրութիւն։

Յաջորդ համարում խմբագրութիւնը խոստանում է տպել թիւրք վիպասանուհի Խալիդէ Սալիհի մի պատմուածքը։

Խ. Փ.

ՊԱՊԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

Պիոս X-ի եպիսկոպոսութեան յիսնամեակը տօնվեց չափազանց համեստ կերպով։ Առաւօտեան պապն ընդունեց կարդինալներին, պետական քարտուղար Մերրի-դէլ-Վալ մի ճառ արտասանեց։ Երեկոյեան Վատիկանում կայացաւ պապական կապելլաների երկու կօնցերտը, որոնք, ի միջի այլոց, կատարեցին «պապական օրհներգը» և հատուածներ «Գիւղական պատիւ» օպերայից։ Դրանից յետոյ պապի շվեյցարական երաժշտախումբը նուագեց հատուածներ օպերաներից։

Ամբողջ օրվայ ընթացքում վատիկանի բրօնզեայ դռների վրա ծածանվում էր պապական դեղին դրօշակը։

Իր յոբելեանին պապը ստացաւ շնորհաւորութիւններ Եւրոպայի շատ միապետներից, որոնց թւում և Վիլհելմ կայսրից։ Գերմանական կայսրի շնորհաւորութեանը թէ Գերմանիայում և թէ Իտալիայում մեծ նշանակութիւն են տալիս։ Ասում են, որ նրա մէջ, բացի սովորական քաղաքավարական խօսքերից, կան ֆրազներ պետական վերաբերմունքի մասին դէպի եկեղեցին։

ԼՕՐԴԵՐԸ ԵՒ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

Ոչինչ կասկած չը կայ, որ լօրդերի ժողովը կընդունի այն որոշումը, որ առաջարկեց լօրդ Լէնսդօուն, այն է բիւջէի ընդունման հարցը անգլիական ազգի վճռին թողնել։ Այդ բանից յետոյ, ի հարկէ, կը լուծվի համայնքների ժողովը և ահա այն ժամանակ կը սկսվի քաղաքական կռիւ գլխաւոր գործողութիւնը Բրիտանիայի երկու պատմական կուսակցութիւնների միջև։ Այժմ, երբ բոլոր նախնական հարցերը վճռված են, երբ կուսակցները արդէն զբաւել են իրանց բռնած դիրքերը, կռիւը աւելի մեծ եռանդով առաջ կը մղվի, քան թէ առաջ։ Եթէ լօրդերի ժողովը կը վերսկսի իր նիստերը եկող շաբաթ, այն ժամանակ լօրդ Լէնսդօունի բէզոլիւցիայի ընդունումը միայն մի քանի օրվայ հարց կը լինի։ Ապա բիլը կը վերադարձվի համայնքների ժողովը։ Կառավարութիւնը կը յայտարարէ, որ բարձրացնում է դէպի իրան նետված ձեռնոցը, և այն ժամանակ պարլամենտի լուծումը տեղի կունենայ, հաւանօրէն, յունվարի 10-ին նոր ռօմարով։ Մինչև այդ ժամանակ, սակայն, կառավարութիւնը մտադրութիւն ունի մի քանի շտապ օրինագծեր անցկացնել, որոնց ընդունելութեան համար անհրաժեշտ է և լօրդերի ժողովի աջակցութիւնը։ Լօնդօնի քաղաքական շրջաններում չեն կասկածում, որ լօրդերը հաւանութիւն կը տան այդ օրինագծերին, որովհետև այլապէս պետութեան ամբողջ ֆինանսական կացմը կախված կը մնար օդի մէջ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԼ. ԲԱԼԱՆԹԱՐԻ ՅՕԲԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Մօտենում է Ալ. Բալանթարի գիւղատնտեսական գործունէութեան 30-ամեայ յօբելեանական տօնը, որին ապագայում, ի հարկէ, կը կցվի նաև նրա գրական-հրապարակախօսական յօբելեանը։

Անշուշտ, հայաբնակ շատ գիւղերի ու քաղաքների հասարակութիւններ կը գան շնորհաւորելու յօբելեարին, որը ամբողջ 30 տարի իր ուսերի վրա տարել է գիւղատնտեսական գիտելիքներ տարածելու ամենամեծ դժուարութիւնը, մեզ՝ կուլտուրապէս յետ մնացած ու գիւղատնտեսական նորանոր գիւտերի թշնամի ազգի մէջ։

Անշուշտ մեր հայաբնակ ամենամեծ կենտրոններից շատերում կը գտնվեն մի քանի հիմարկութիւններ և շրջաններ, որոնք չեն մոռանայ և իրանց շնորհաւորական հեռագիրները կուղղեն յօբելեարին, սակայն հայ ժողովրդի բռնած դիրքը այդպէս չը պէտք է լինի։

Այս յօբելեանական տօնը ամենին մասնաւոր բնոյթ չը պէտք կրէ, քանի որ տօնվում է այնպիսի մի մարդու յօբելեանը, որը քառորդ դարից աւելի, իր անխորտակելի բնաւորութեամբ, լուսաւորել է մեր խաւար մթնոլորտը՝ թէ գրչով և թէ խօսքով։

Այս տօնախմբութիւնը պէտք է ընդհանուր անել։ Կովկասեան համարեա բոլոր վայրերից պէտք է շնորհակալութեան ձայներ լսվեն. մի կողմ պիտի մնան անձնական կրքերը ու հաշիւները. ահա այն գլխաւոր հանգոյցը, որը դրված է գիտակից հայ ժողովրդի առաջ։ Այս պէտք է անենք, եթէ չենք ցանկանում կուլտուրական ազգերի ամենավերջին շարքում լինել։

Արդեօք մենք կարող կը լինե՞նք մեր անձնական հաշիւները մի կողմը թողնել և քաղաքացիական քաջութեամբ արժանաւոր կերպով մեր սէրն ու յարգանքը յայտնել մեր հին ու անդադրում գործչին։

Ուզում եմ հաւատալ, որ, այո, կարող ենք։

«Մշակի» այս տարվայ 243-րդ համարում Վ. Դիմաքսեանը, հրաւէր կարդալով «Մշակի» թէ նախկին և թէ ներկայիս բոլոր աշխատակիցներին, առաջարկում է մասնակցել յօբելեանական հանդիսին և կարծիքներ յայտնել մասնակցութեան ձևի մասին։

Ես, «Մշակի» աշխատակիցներից թերևս ամենից կրտսերն ու ամենից համեստը, ընդունելով Վ. Դիմաքսեանի առաջարկութիւնը, իմ կողմից կառաջարկէի նաև «Մշակի» աշխատակիցների միջոցներով հրատարակել Ալ. Բալանթարի հրապարակախօսական բոլոր յօդուածները մի գրքով և դրանով դիւրութիւն տալ ապագայ սերնդին, ըմբռնելու Ալ. Բալանթարի հրապարակախօսական հայացքները։ Ըստ իս, եթէ իմ այս առաջարկութիւնը ընդունվի, դա կը լինի ամենամեծ և ամենանուիրական նուէրը յարգարժան յօբելեարին, և, կարծում եմ, դա կը լինի նաև ամենալաւ «ուղերձը» «Մշակի» աշխատակիցների կողմից։

Սոյն առաջարկութիւնս կիրառդրվի, եթէ մեզանից ամեն մէկը իր խօսքով, գործով ու եռանդով հրապարակ իջնի։

Մամուլը, որը հասարակական կարծիքի ամենամեծ արտայայտիչն է, անշուշտ կը զգայ իր վրա դրված մեծ պարտականութիւնը և իր ոյժերի չափով կը կատարէ իր պարտքը։

Զը պէտք է մոռանալ, որ յօբելեանական տօնը այն ժամանակ հանրային բնոյթ կը կրէ, երբ մեզանից ամեն մէկը, հասարակութեան ամեն մի անդամը, իր աշխատանքի ու գիտակցութեան լուման կաշխատէ ձգել ընդհանուր գանձանակի մէջ։

Հասարակական ինքնագիտակցութեան մէջ պէտք է որոնել Ալ. Բալանթարի 30-ամեայ յօբելեանի աջողութեան գրաւականը, և հէնց դրա մէջ էլ պէտք է տեսնենք մեր ինչ լինելը։

Ս. ք. Տէր-Յովհաննիսեանց

Ստաւրօպոլ

ՏԻԿԻՆ ՀՐԱՋԵԱՆ

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳԻՐ-ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՂ

Իր կիսադարեայ կեանքի գագաթին կանգնած՝ տիկին Հրաչեայ, անմոռանալի դերասանուհին, մի յետաձգելի է ձգում իր կորած ապարէզի վրա։ Բեմի այդ սիրադէմ դեղուհին, որ այնքան գրաւիչ համեստութեամբ, ազատուն շնորհված քաղցրութեամբ, Ինչում է՝ թէ մուսան քնարը ուրիշներին է նուիրել և իրան թողել է լոկ արձանագրողի պաշտօնը, այնքան շնորհալի արուեստով և ուշագրաւ գողտր պատմուածքով անում է իր կեանքի նկարագրութիւնը և պատկերանում է այն բեմը, որի վրա սահել են իր գեղարուեստական ժամերը, որ զմայլեցնում է ընթերցողին և սրան ևս իր հետ ապրեցնում է՝ հրապուրալից շահեկանութեամբ՝ իր բեմական ամբողջ կեանքը։ Ի՜նչ արկածներ և ի՜նչ ուրքան դէմքեր կը տեսնէք դուք այդ կատաւի վրա, որ թովչական արուեստով և պատշաճ ու վայելուչ գոյներով կենդանացնում է ձեր աչքի առաջ, կասեմ առանց վերապահութեան, արուեստի այդ վհուկը, տիկին Հրաչեան։

Թող նրանք, որոնք սիրել են ու սիրում են գեղարուեստը բեմի վրա, կարդան մանուկ օրերից Մելպօմենէի համբոյրը ճաշակին առած այդ դերասանուհու պատկերագրութիւնը Զոպանեանի «Անահիտի» էջերում (ապրիլ-սեպտ. 1909)։ Եւ թող նրանք, որոնք իսկական սիրով գգվում են բեմի գոյութիւնը յարակենդան և յարաճուն պահել մեր մէջ, կարդան գողտրիկ մատներով և խորին սիրով գրված երկէջեան այդ 50 երեսները, որոնք բաց են անում տեսութեան հանդէպ մի պանօրամա, մի համատեսարան, թատրօնի պատմութեան մի էջը՝ գրաւիչ ոճով գրված. մի էջ՝ որ բացվում է Բօսֆօրի վրա և կնքվում է Կովկասում։

Վերջիններս մանաւանդ կը գտնեն այդ էջերի մէջ յուցումներ՝ թէ ինչպէս են առաջ գալիս բեմի վրա շնորհները. ո՞րն է նրանց այդտեղ զարգանալու և կատարեալ աջողութեան հասնելու պայմանը. որոնք են զեկավարութեան գործում խոչընդոտները, որոնցից պէտք է խուսքեն բեմի վարիչները, և ընդհակառակն որոնք են այն պայմանները, որոնց կատարումով բեմն իր արժանի տեղն ու գոյութիւնը կարող կը լինի պահպանել։

Ցաւում եմ, որ յարմարութիւն չունեմ արժանի չափով կանգ առնելու այդ պատկական էջերի վրա՝ ցայտեցնելու համար հետաքրքրութեան և ուշադրութեան արժանաւոր շատ և շատ կէտեր։

Ընթերցասէր ժարդիկ և մանաւանդ թատրօնի բաղդը մեր մէջ տնօրինողները անշուշտ իրանք կը կարդան այդ թանգագին տողերը, որոնց առանձին գրքոյկով երևալը մի սիրելի ընծայաբերութիւն կը լինէր ճաշակասէր ընթերցողին։

Շնորհագիտութեան պարտք է յիշելը այստեղ թէ ազնիւ տիկինը իր այդ «Յիշողութիւնները» գրի է առել բանաստեղծ Յովհ. Թումանեանի հրաւէրով, որին և ձօնված են նրանք նախաբան մի նամակով։

Ա. Մ. Եղեկեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ղշլաղ, 10 նոյեմբերի

Մեր գիւղերում սաստիկ տարածված է ծաղիկ հիւանդութիւնը։ Մինչև օրս ահագին թւով մանուկներ են զոհ գնացել։

Ղշլաղում օրական միջին թւով մեռնում են 4—5 երեխայ։ Բժշկական ոչ մի օգնութիւն։

Անասունների մէջ էլ մեծ չափով տարածված է մալիարիա կոչված հիւանդութիւնը, որը մի ամսվայ ընթացքում բազմաթիւ անասուններ է կոտորել և շարունակում է կոտորել։

Գիւղացիներից մի քանիսի հրաւէրով շրջանիս անասնաբոյժը եկաւ հիւանդութեան տեղը. մանրաման քննելուց յետոյ հրապարակով յայտնեց, որ անհրաժեշտ դեղերի բացակայութեան պատճառով կռիւը անկարող է դառնալ այդ համաճարակի դէմ։

Ուրեմն գիւղացիներին մնում է հաշտվել իրանց ճակատագրի հետ և անտրտունջ տանել այդ ծանր հարուածը։

Հիւանդութիւնը, եթէ այս տեմբով շարունակվի, սպառնում է ոչնչացնել գիւղի անասունների մեծ մասը։

Գիւղական անբոյժ դողերը անարգել շարունակում են իրանց սիրաբորբութիւնները։

Անցեալ օրը, գիշերով փախցրել են 3 կով և թաղանել են մի գիւղական այրուտուն։

Մեղանում եղանակը գարնանային է։ Վերջին 2 շաբաթվայ պարզ օրերը նպաստեցին գիւղացիներին վերջացնելու իրանց կալերը, որոնք մի ամսից աւելի մնացին անձրևների տակ։

Հացահատիկների գինը օրէ օր իջնում է։ Լաւ ալիւրը 1 ր. 20 կ.—1 ր. 10 կ., գարին 50—55 կ., ոչխարի միսը—8 կ., տաւարինը—7 կ. ոչ կ. կարտոֆիլի պուդը—20—25 կ.։

Եթէ այս տարվայ հիւանդութիւնները չը լինէին, մեր գիւղացիութիւնը չափազանց ուրախ և կուշտ կանցկացնէր ձմեռը։

Բայց դժբաղդաբար «երկու ուրախութիւն մի տեղ չէ լինում»—ասում է ժողովրդական առածը։

Մ. Ղազարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ Այսօր, Թադուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնայի ծննդեան տարեդարձի օրը, բոլոր կառավարական և հասարակական հիմնարկութիւնները կը լինեն փակ և կը բարձակոն հաստատութիւնների սանները՝ արձակված։

✦ Վաղը, առաւօտեան ժամը 11-ին, Կովկասեան Կայսերական Գիւղատնտեսական Ընկերութեան շէնութեան մէջ հանդիսաւորապէս կը բացվի Կովկասի գիւղատնտեսների համագումարը ընկերութեան նախագահ Գրուզինսկու ճառով։ Ապա ողջոյնի ճառ կարտասանեն Ալ. Բալանթար, Ս. Էյրանեան և ուրիշները։ Այդ օրը երեկոյեան՝ համագումարին մասնակցողները կը հիւրասիրվեն թէյով։ Համագումարը կը շարունակվի մօտ 10 օր, որի ընթացքում տեղի կունենան 16 նիստեր, որոնցից նոյեմբերի 21-ի նիստը կը նուիրվի Ալ. Բալանթարի գիւղատնտեսական գործունէութեան 30-ամեայ յօբելեանին։ Կօօպերատիվ շարժման մասին համագումարում զեկուցում կարդալու համար Պետերբուրգից կը գայ յայտնի տնտեսագէտ Տօտօմեանցը։ Համագումարին ներկայ լինելու համար Գիւղատնտեսական Ընկերութեան խորհուրդը հրաւիրել է մօտ 60 անձանց ոչ անդամներից։

✦ Կովկասի Փոխարքան Բագուի նահանգապետից ստացաւ հետևեալ հեռագիրը։ «Բագուի նահանգում զէմստվօ մտցնելու հարցով զբաղվող խորհրդակցութիւնին, ձեռնարկելով իր պարապմունքներին, միաձայն որոշեց շնորհակալութիւն յայտնել ձեր պայծառափայլութեանը՝ զէմստվային տնտեսութիւնը բարեկարգելու հարցը յարուցանելու և հասարակական ոյժերը երկրի բարեկեցութեան խնդիրներին մատնակից անելու նախաձեռնութեան համար։ Միևնոյն ժամանակ խորհրդակցութիւնը խնդրեց ինձ ոյժ և առողջութիւն մաղթել ձեր պայծառափայլութեանը, յետագայ ձեր աշխատանքների համար յօգուտ Կովկասի»։

✦ Թոքախտի դէմ կուող Կովկասեան Ընկերութիւնը, ցանկանալով աջակցել թոքախտաւորների բացիօնալ բժշկմանը առհասարակ և առանձնապէս չունևորներին, որպէսզի ըստ հնարաւորութեան թուլացնէ այդ հիւանդութիւնը, նոյեմբերի 12-ին դիմել է Բագուի քաղաքային վարչութեանը, խնդրելով յանձն առնել բանալու Բագուում ընկերութեան բաժանմունք։ Համաձայնութեան դէպքում ընկերութիւնը խնդրում է հաղորդել այդ մասին առանձին հրահանգներ ուղարկելու համար։ («Կ.»)

✦ Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն դիմեց Գիւղատնտ. ական Ընկերութեանը, խնդրելով ուղարկել մի մասնագէտ փորձված գիւղատնտես՝ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան հաշուով պահվող գիւղատնտեսական դպրոցները կառավարելու համար։

✦ Ինժենէր իշխ. Անդրօնիկօվը Թիֆլիսի վրաց ազնվականութեան յանձնարարութեամբ ներկայումս բանակցութիւններ է վարում այն հողաբաժինների տէրերի հետ, որոնց միջով անցնելու է Կախէթեան երկաթուղին։ Անդրօնիկօվին աջողվել է շատ հողատէրերի համոզել զիջել իրանց կալուածքները ակցիոներով։

✦ Բագուի նահանգապետը Կովկասի Փոխարքայի դիւանատան հարցմունքին պատասխանել է, որ հացի բերքն այս տարի Բագուի նահանգում բաւարար էր և շինական հասարակութիւններից մատակարարական նպատակների մասին խնդրագրեր չեն ստացվել մինչև օրս։ Կարսի շրջանի զինուորական նահանգապետի տեղեկութեան համաձայն ևս, հացի բերքն այս տարի ամենուրեք այդ նահանգում ստացվել է բաւարար, իսկ տեղ-տեղ՝ լաւ. ազգաբնակութիւնը ապահովված է ուտելիքով, չը նայած այն հանգամանքին, որ անձրևային եղանակը խանգարեց բերքը ժողովելուն։ Ոչ մի միջոնդրդութիւն գիւղացիներից հացի մասին չէ ստացված։

✦ Թիֆլիսում վարակիչ հիւանդութիւնները զգալի չափով պակասել են։ Հատ-հատ դէպքեր պատահում են ծաղկի հիւանդութեան, որով հիւանդանում են մանաւորապէս երեխաները։

✦ Մայրաքաղաքի լրագիրներից իմանում ենք, որ ներկայումս Գեղարուեստից ճեմարանում բացված է այս տարի ճեմարանը աւարտածների աշխատանքների ցուցահանդէսը։ Ներկայ աւարտածների թւում կան երկու հայ երիտասարդներ, որոնք ստացել են «գեղարուեստագէտի» կոչում։ Դրանք են Լ. Մարտիրոսեանց, որ ցուցահանդէսում ունի «Հանաքներ» անունով պատկերը, և Դ. Օքրօյանց, որի նկարած պատկերի նիւթը առնված է հայ պատմական կեանքից (Սահակ կաթողիկոսի՝ մահվանից առաջ խնդիրքը)։

✦ Որովհետև զանազան տեղերից դիմում են Մանթաշեան ուսումնարանի վարչութեանը աշակերտական ազատ տեղերի համար, յիշեալ ուսումնարանի վարչութիւնը մեզ խնդրում է յայտնել, որ կայ միայն մի քանի տեղեր պատրաստականի ստորին բաժանմունքում։ Քննութիւնները նոր ժամանողների համար լինելու է նոյեմբերի 19-ին։

✦ «Т. Д.» ռուս թերթը հաղորդում է, որ կոմս Ի. Ի. Վօրոնցով-Դաշկովը հրաւիրեց Թիֆլիսում գտնվող Բերլինի համալսարանի պրոֆէսոր Բ. Խալաթեանին, որ նորին պայծառափայլութեանը մէկ և կէս

ժամի չափ տեղեկութիւններ տուեց իր կատարած պեղումների մասին։ Ներկայ են եղել նաև կոմսուհին և սենատոր Վատացին, որոնք Խալաթեանի տեղեկութիւնները լսել են մեծ հետաքրքրութեամբ։

◆ Կ. Հ.Բ. Ընկերութեան Նոր-Բայազէտի ճիւղի վարչութիւնը խնդրում է մեզ յայտնել իր խորին շնորհակալութիւնը տեղական թատերասէրներ օր. օր. Վ. Եղիազարեանին, Հ. Բարոյեանին, պ. պ. Ա. Մանուկեանին, Ռ. Ազարեանին, Ս. Նասխիդեանին, Գ. Տէր-Խաչատրեանին և այն բոլոր անձանց, որոնք սիրալիր պատրաստակամութեամբ մասնակցեցին հոկտեմբերի 25-ին ընկերութեան օգտին տրված ներկայացմանը։

◆ Մեզ խնդրում են բարերար մարդկանց ուշադրութիւնը հրաւիրել որբեր Նատի Օսկոլովայի և Լիւբա Միլոդանովիչի ծայրայեղ չքաւոր դրութեան վրա, որոնք այժմ ապրում են իրանց խաչեղբօր մոտ, որը ծերունի է և աշխատելու անընդունակ։ Այս ծերունին զրկվեց երեք որդուց և ամբողջ ունեցածից հայ-թուրքական ընդհարումների ժամանակ։ Ամբողջ ընտանիքը քաղցած է։ Հասցէն Զուզուբէթ, Ամատունէվսկայա փող. № 31։

◆ Պետերբուրգ և Մոսկվա մեկնեց կենդանաբան Սատունինը որսորդական և ձկնորսական համագումարներին մասնակցելու և կենդանաբանական թանգարաններում ուսումնասիրութիւններ կատարելու համար։

◆ Բաշտի ռուսաց ընդհանուր հիւպատոս, պետական խորհրդական Շարիտերը նշանակված է, մայրաքաղաքի լրագրների ասելով, նոյն պաշտօնով՝ Էրզրում։

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

◆ Թիւրքահայերի երեք պետերը, այսինքն հայ-լուսաւորչականների պատրիարք Դուրեան սրբազան, հայ-կաթոլիկների կաթողիկոս-պատրիարք Սապպաղեան գերապայծառ և հայ-բողոքականների ազգապետ Նազարեան էֆէնդի, վերջին դիմել էին Կիլիկիայի վերջին կոտորածից վնասվածներին օգնելու համար կազմված միջազգային յանձնաժողովին և խնդրել, որ նպաստամատոյց այդ ժամանակը կոչ անէ եւրոպացիներին՝ օգնութեան հասնելու համար ազատեալ կիլիկիացիներին, որովհետև աւելի քան 80,000 այրի կանայք և ամուսիններ, իսկ 4000-ից աւելի երկսեռ որբեր մնացել են անպատսպար ու բաղդի քմահաճոյքին ենթակայ։ Միջազգային յանձնաժողովը, ի նկատի ունենալով խնդրի կարևորութիւնը, ցանկալի նկատեց այդ կոչը հրատարակել է յանուն Եւրոպայի բարեգործների։

◆ Մենք վերջերս հաղորդել էինք, որ Կ. Պոլսի ազգ. պատրիարքարանին կից գործող Նորընտիր քաղ. ժողովի անդամներից վեց հոգի հրաժարական էին ներկայացրել։ Կ. Պոլսից վերջին պատով ստացված հայ թերթերը ներկայումս հաղորդում են, որ յիշեալ վեց հոգին, շնորհիւ Դուրեան պատրիարքի հրաւէրի, յետ են առել իրանց հրաժարականները և խոստացել իրանց առաջարկված պաշտօնը վարել՝ մինչև կը լուծվի պատրիարքի հրաժարականի խնդիրը։

◆ Աղթամարից հեռագրել են Կ. Պոլսի ազգ. պատրիարքարանին, որ Աղթամարի կաթողիկոսական փոխանորդ Յովսէփ եպիսկոպոսի փոխարէն, որ հրաժարական էր ներկայացրել, ընտրվել է վանքի միաբաններից Եղնիկ վարդապետը, որի հաստատութիւնը խնդրվում է պատրիարքարանից։

◆ Կ. Պոլսի նախորդ պատրիարք Օրմանեանի դէմ եղած ամբաստանութիւնները քննելու պաշտօն ունեցող յանձնաժողովի աշխարհական անդամները վերջերս իրանց հաւաքական հրաժարականն են ներկայացրել։ Դրա պատճառն այն է, որ յանձնաժողովի հոգևորական անդամները հեռացել են իրանց պաշտօնից և այդպիսով քննութեան գործն ամլութեան ենթարկել։

◆ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի Նորընտիր քաղ. ժողովի ատենապետ է ընտրվել Մանուկ Ազարեան, իսկ ատենադպիր՝ Սարգիս Սուլին։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Այս օրերս Ռուսաստանի շատ խոշոր գործարաններից մէկը, Պետերբուրգում, պատուէր ստացաւ անգլիական զինուորական ատելանից անագին քանակութեամբ կօշիկներ պատրաստելու բրիտանական զօրքի համար։ Այդ փաստը համարում են որպէս հեռանք անգլո-ռուսական տնտեսական մերձաւորութեան։ («Բ. Ս.»)

◆ Ֆինլանդական սէյմը, հէնց փակվելուց առաջ, որոշեց խնդրագիր ուղարկել Բարձրագոյն անունով, որպէսզի իրաւունք տրվի երան մշակել մի նախագիծ հրէաների վերաբերմամբ։ Այդ նախագծով հրէաներին իրաւունք պէտք է տրվի ապրել և զբաղվել արդիւնագործութեամբ Ֆինլանդիայում, նոյնպէս և ֆինլանդական հպատակութիւն ընդունել։ («Բ. Ս.»)

◆ Ռուսաց բինոդի կարգադրութեամբ Սմօլենսկի թեմի մէջ կատարված քննութիւնից պարզվեց, որ վանքերում ապրող արիւնները չեն կատարում իրանց տուած երդումը։ Մի քանի վանքեր բանտորներ են վարձում եկեղեցական հողերը մշակելու համար կամ եկեղեցական հողաբաժինները վարձով են տալիս։ Այդ առիթով Սմօլենսկի թեմական իշխանութիւնը վանքերին մի շրջաբերական ուղարկեց, որի մէջ ասված է. «Այդ բանը հնարաւորութիւն է տալիս կարծելու, որ վանքերը ամենևին կարիք չունեն հողաբաժինների, և շատ արդարացի կը լինի, եթէ ուղղափառ քրիստոնեաները սկսեն մատնացոյց անել, որ վանքերին ամենևին հողեր հարկաւոր չեն։ Վարձու աշխատանքը, որ այժմ եռանդով գործադրվում է վանքերում, վերջիններին կալուածատէրերի կալուածքներին է նմանեցնում, և կարծես թէ արեղաներ չեն ապրում վանքերում, այլ կալուածատէրեր։ Ուստի վանքական կեանքը պատշաճաւոր բարոյական բարձրութեան վրա կանգնեցնելու համար հրամանագրում եմ բոլոր վանահայրերին խստութեամբ հսկել, որպէսզի արեղաները իրանց աղօթքներից ազատ ժամանակն անցկացնեն ֆիզիկական աշխատանքով»։

◆ Ֆինլանդ. սէյմի պատգամաւորների յայտարարութիւնը Վըբորգի նահանգից, որ տպվեց բոլոր ֆիննական լրագիրներում և ուղղված է դէպի ռուս հասարակական կարծիքը, արտացոլում է Վըբորգի նահանգի ազգաբնակութեան հասկանալի երկիւղը, որ առաջացել է վերոյիշեալ նահանգը Ռուսաստանի հետ միացնելու լուրերի շնորհիւ։

«Մենք չենք հասկանում,—ի մէջի այլոց ասված է այդ յայտարարութեան մէջ,—թէ ինչպէս կարող է օգտակար լինել ռուս ժողովրդին, որի հետ Ֆինլանդիան մշտական գործնական յարաբերութիւնների մէջ է, մի այնպիսի միջոց, որը դժբաղդութեան է ենթարկում ֆիննն ժողովրդին և խորտակում է նրա գոյութեան բոլոր հիմքերը։ Մենք չենք հաւատում, որ ազնիւ ռուս ժողովուրդը կարողանար հաւանութիւն տալ մի անարդարութեան, որը իբր թէ յանուն նրա շահերի անվում է մի փոքրիկ և անպաշտպան ազգի վերաբերմամբ։ Ռուս մեծ ժողովուրդը, որի տարեկան աճումը համարեա հաւասար է Ֆինլանդիայի ամբողջ ազգաբնակութեանը, ոչինչ անյարմարութիւններ չի զգայ այն բանից, որ ֆիննն ժողովուրդը, իր ազգային օրէնքների և հիմարկութիւնների հովանաւորութեան տակ, ձգտում է իր առանձին կուլտուրական նպատակներին։ Մինթէ փառք և պատիւ չաւելացրեց ռուս ժողովրդին մի դար ժամանակամիջոցը, որի ընթացքում ֆիննն ժողովուրդը, ինքնուրոյն ներսից և անբաժան, միացված էր ռուս պետութեան հետ։ Մինթէ այդ ժամանակաշրջանը չը ցոյց տուեց, որ և փոքր ժողովուրդը կարող է ապրել մեծ ազգի հետ միացած, չը նայելով իր ազգային առանձնայատկութիւններին, և դրանով ժամանելով իր լուման մարդկային կուլտուրայի ընդհանուր գանձարանի մէջ»։

◆ Ռուսաց սինոդի ուսումնարանական կոմիտէը պաշտօնեաներ ուղարկեց Պսկով, Ժիտոմիր, Վատակա և Տօբոլսկ քննելու համար հոգևոր սեմինարիան մեներում տեղի ունեցած անկարգութիւնները։ Վճռված է արձակել անկարգութիւնների մէջ խառն աշակերտներին։ («Բ. Ս.»)

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Լէօնիդ Անդրէեվի «Անգիսա» դրամաներգ Հինգշաբթի, նոյեմբերի 12-ին, ռուսաց դրամատիկական խումբը ներկայացրեց դերասան Բարատովի բենեֆիսին Լէօնիդ Անդրէեվի «Անգիսա» նոր պիէսը, որ վերջերս շարունակ խաղացվում է Պետերբուրգի Նոր Դրամատիկական թատրոնում և մեծ ազդուկ է հանում։

Թատրոնը ծայրէ ծայր լի էր։ Բենեֆիցիանտը բազմաթիւ թանգագին ընծաներ և ծաղկեփնջեր ու պսակներ ստացաւ։

Թողնելով մի այլ անգամի տալ այդ պիէսի բովանդակութիւնը, այժմ պէտք է ասենք, որ այդ պիէսի վրա կարելի է նայել իբրև մի էտիւդ սեռական պատալոգիայի։ Սեռական կեանքը մեր ժամանակակից հասարակութեան մէջ ամենահիանդուռ կողմն է կազմում։ Ոչինչ խրատական և բուժիչ չենք գտնում, երբ Լէօնիդ Անդրէեվը առաջ է բերում այդ հիանդուռ կողմը չափազանցված գոյներով։ Երիտասարդ, տաղանդաւոր, բարձր ուման տէր մի փաստաբան, ամուսնանալով մի աղջկայ հետ, մոլորեցնում է միևնոյն ժամանակ և իր հարազատ կնոջ երկու քոյրերին և ապրում է միաժամանակ երեք քոյրերի հետ։ Կեանքի մէջ պատահում են այդպիսի երևոյթներ, որոնք սեռական խեղաթիւրումների ապացոյցներ են, բայց աշխատել ինչ-որ մի օրէնք ստեղծել այդ խեղաթիւրումների շուրջը, այդտեղ մենք ոչ մի գեղարուեստական նպատակ չենք տեսնում։

Բարատով, որ խաղում էր պիէսի հերոս՝ Կոստոմարով փաստաբանի դերը, և տիկին Կրեչետովա, որ խաղում էր հերոսուհի Ամֆիսայի դերը, թափեցին իրանց բոլոր եռանդը՝ ստեղծելու հոգեբանական տիպեր. բայց չը նայած իրանց հիանալի խաղին, դժուար թէ որևէ մի հանդիսական, հեռանալով թատրոնից, իրատական կամ կրթիչ որևէ մի տպաւորութիւն ստացած լինէր։

Հ. Ա.

Նոյեմբերի 12-ին վրաց դերասանական խումբը խաղաց Բարբէի 4 գործ. «Նոր վարդապետութիւն» պատմական դրաման, որի նիւթը վերցված է Ներոնի ժամանակներից։

Պիէսը շատ նման է Սենկեվիչի «Հոն երթաս» վէպին, այն տարբերութեամբ միայն, որ տիպերը և դէպքերը ներկայացված են մի քիչ տարբեր ձևով։

Խաղը ընդհանուր առմամբ աջող անցաւ և աւելի տպաւորիչ կը լինէր, եթէ դերակատարները դերերը լաւ սովորած լինէին, որպէսի հանգամանքը ինասում է խաղի ամբողջացմանը։ Դեկորացիաները շատ աղքատիկ տպաւորութիւն էին թողնում։

Թատրոնը կիսով չափ դատարկ էր։

Ց. Գ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Եկեղեցական առողջաբանութիւն», բժշկապետ Ս. Բարայեանի, 1909 թ.։ *)

Գրքի երրորդ գլուխը նուիրված է համբոյրի ինասակարութեան, իբրև տարափոխիկ միջոցի, և սիֆիլիս հիւանդութեան տարածման, որը բժշկական գրականութեան մէջ վաղուց արձանագրված է։ Թէ ինչ տեսակ դէպքեր են եղել վարակման, կարելի է գտնել մէկ փոքրիկ հետաքրքրական գրքոյքի մէջ *)։ Հեղինակը՝ սատիկ կողմնակից հակահամբոյրի՝ լաւ կանէր, եթէ բերէր մի քանի օրինակներ։ Նա ասում է, որ մի քահանայ, որ վախճանվեց սիֆիլիսից, շարունակում էր իր քահանայութիւնը, գիտութեամբ թեմական առաջնորդի, որ կարգադրութիւն չարեց, որ այդ քահանան դադարեցնէր իր պաշտօնը։ Պախարակելի վարմունք առաջնորդի կողմից։

Անցնենք գրքի ամենահետաքրքրական գլուխներին ամուսնութեան վերաբերեալ։ Պէտք է ասած, որ այդ հարցը հեղինակը լաւ ուսումնասիրել է, ծանօթանալով նրա վերաբերեալ գրականութեան հետ, գլխաւորապէս ֆրանսերէնի հետ։ Նա արդէն թարգմանաբար զեկուցել է անցեալ ամսի 31-ին բժշկական ընկերութեան մէջ։ Հեղինակը՝ թէ իր գրքոյկում և թէ յիշեալ զեկուցման մէջ բացասական վերաբերմունք է արտայայտում թէ դէպի բժշկական վկայականը և թէ սինոդի կարգադրութիւնը։

Հարկաւոր է մի հատուած բերել գրքից այդ հարցի մասին։

Մեր եկեղեցին պահանջում է ամուսնացողներից լիակատար առողջութիւն և ժառանգական անարատութիւն ապագայ սերնդի քաջառողջութիւնը ապահովելու համար... Եկեղեցու պաշտօնեաները՝ գլխաւորապէս քահանաները՝ պարտական են, որ հոգով ու մարմնով ոչ մի արատաւոր, ոչ մի յարատև ախտաւոր պակի խորհրդի չը մատնան... Բայց ինչ ենք տեսնում մեր կեանքում. կիսապուշը, ընկնաւորը (эпилепт.), վնասաբերը, բորոտը, սիֆիլիսոտը, բարակացաւորը, գինեմոլը, երբ կամենան պսակվել, ամենևին արգելքի չեն հանդիպում քահանայի կողմից (հրես 53)։

Հեղինակը առաջ բերելով քահանաների այն՝ մեր կարծիքով՝ ճշմարիտ առարկութիւնը, թէ նոքա, մասնագէտ չը լինելով, չեն կարող որոշել պսակվողների հիանդութիւնը, գրում է. «Նրանք ինչքան էլ տպէտ լինեն՝ պիտի իմանան, որ յիշածս ախտերը փոխվող կամ վարակիչ կամ ժառանգաբար անցնող ախտեր են» (հր. 54)։

Շատ դէպքերում մենք՝ բժիշկներս դժուարանում ենք ճանաչել հիւանդութիւնը, վանողոյ հանգուցեալ կաթողիկոսի կանոնի թերութիւնը, ի մէջի այլոց, գտնում ենք նրա մէջ, որ նա չէ պահանջում հիմնաւոր բժշկական քննութիւն գոնէ երեք բժիշկներից բաղկացած յանձնաժողովի միջոցով, ուր պիտի լինեն մի պերապիվա, մի սիֆիլիսօլոգ և մի հոգեբոյժ, իսկ մեր հեղինակը կարելի է համարում պահանջել այդ քահանայից, որը երբէք չէ կարող ամուսնացողների վերոյիշեալ հիւանդութիւնները որոշել։ Հեղինակը XII և XIII գլուխներում բերել է շատ հետաքրքրական տեղեկութիւններ և հեղինակաւոր պրոֆեսորների կարծիքներ, որոնց հետ հարկաւոր է ծանօթանալ։

Բժիշկ Կազալիս իր «Գիտութիւն և ամուսնութիւն» գրքի մէջ պահանջում է պարտադիր օրէնք ամուսնացողներից բժշկական վկայական ներկայացնելու։ Պարիզի հռչակաւոր բժշկական ակադեմիան պրոֆ. Պինարի նոյն հարցի մասին արած զեկուցման առիթով փոքրաթիւ մեծամասնութեամբ կարծիք յայտնեց ի նպաստ բժշկական վկայականի։ Գրեցին նոյն մտքով հռչակաւոր Զոլան և թատերագիր Բրիոն (Les avaries)։

Անգլիական պարլամենտում նոյն հարցը նիւթ դառաւ քննութեան։ Զը նայած այս ամենին՝ ոչ Ֆրանսիայում և ոչ մի քաղաքակիրթ երկրում բանը օրէնսդրութիւն սահմանելուն չը հասաւ, ոչ աշխարհական և ոչ հոգևոր իշխանութեան կողմից։

Վերոյիշեալ հեղինաւոր անձանց և ակադեմիայի կարծիքը ապացուցանում են այն, որ բժշկական վկայականը ամուսնութեան հարցում կարևոր է։ Եւ արդէն գտնվում են քաղաքակիրթ տեղեր, ուր այդ բանը պարտադիր օրէնսդրութիւն է դառել։ «Բրաչեբնայա գազետա»-ի № 47-ում, 1909 թ., գրված է յետագան. «Այս տարվայ յունիսի 14-ին Վաշինգտոնում ժամել է ի գործադրութիւն օրէնք, որը պահանջում է ամուսնացողներից ա) վկայական բժշկից ֆիզիկական և հոգեկան առողջութեան մասին, բ) վկայագրուղթ երկու անձանց երդմամբ, որ նրանք ճանաչում են պսակվողներին գոնէ 2 տարվայ ժամանակում։ Մի ոմն «Тифл. Лист.» № 253, 6 նոյեմբերի, տպած յօդուածում, «Կանանց հարց և պսակվողների առողջութիւն (Женскій вопросъ и здоровье бракущихся), գրում է, որ Ամերիկայի մի քանի շտատներում մտցված է բժշկական վկայական պահանջումը, և յօդուածագիրը կողմնակից է այդ բանին և կաթողիկոսի կանոնին, միայն մշակված և լաւ խմբագրված իրաւաբանների ձեռքով, կաւելացնենք՝ և հմուտ բժիշկների։

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բագու, 5 հոկտեմբերի

Ընթերցող հայ հասարակութիւնը անշուշտ կը մտաբերի «Մշակի» 1907 թւի № 140-ում լոյս տեսած իմ յօդուածից, որ գրած 1907 թւին, Սախալին աքսորավայրում գտնված աքսորական հայ տարրը, դիմելով Ասարախանի հայ-լուսաւորչական կօնսիստորիայի միջնորդութեանը, կառավարչական պատշաճաւոր վարչութեան կողմից թոյլտուութիւն ստացաւ, յիշեալ աքսորավայրում հայ լուսաւորչականներիս հոգևոր պէտքերը հոգալու համար մի աղօթատուն շինել, որի համար հոգաբարձուներ ընտրվելով հաստատվեցին՝ Սարգիս Գուկասեանը, ես և երկու ուրիշ ընկերներ. իսկ ժամանակաւոր հոգաբարձու՝ դեռ մինչև այսօր էլ Սախալինում բնակվող հարուստ հայ վաճառական (աքսորական) Թադէոս Մարգարեանը։ Այս վերջինի մօտ, իբրև ուսնդ՝ գտնվում են յիշեալ ագօթատան համար պատրաստված չորս հարիւրից աւելի հատ գեղաններ, քար ու կիր և ժողովված կանխիկ գումարը։ Նոյն Մարգարեանի իրաւասութեան տակ է նաև ագօթատան համար գնված տափը (գետինը)։ Նոյն յօդուածում շեշտել էի նոյնպէս, որովհետև Սախալինում վերջերս՝ բացի 2—3 հայերից՝ մնացած բոլոր հայերը ցիր ու ցան են եղած, և որովհետև այդ կղզին կառավարութեան կողմից արդէն դադարել է աքսորավայր լինելուց, հետևապէս և ագօթատուն շինելու կարիքը ինքն ըստ ինքեան վերանում է,—ուստի առաջարկել էի՝ այդ ագօթատան շինութեան համար ձեռք բերված տափը և մթերքը (գեղանները, քարը, կիրը), կանխիկ գումարի վերածել և աւելացնելով նոյն նպատակով ժողովված պատրաստի գումարին, որը կը կազմէ մօտաւորապէս 4000 ր. մի պատգամի գումար, գործադրել Թիւրքահայաստանի սովեալների օգտին, նրանց ծով կարիքները որոշ չափով հոգալու. սակայն այդ իմ առաջարկութիւնը պատշաճաւոր հիմարկութեանց և իրաւունքներով օժտված անհատների կողմից մնաց «ձայն բարբառոյ յանապատի»։

Եւ՝ որպէս ընտրված հոգաբարձուներից մէկը, մի աւելորդ անգամ ևս կատարած լինելու համար իմ բարոյական պարտականութիւնը ներկայ խնդրում և ապագայում ինձ ազատ պահելու հմայ պատասխանատուութիւնից,—նուիրական պարտք եմ համարում հրապարակ դուրս գալով՝ կրկին անգամ հրաւիրել թէ Ասարախանի հայ կօնս. և թէ այն հմարկութիւնների անմիջական ուշադրութիւնը, որոնց որպէս մօտ է հարցը, և, ձեռք բերելով այդ գումարը, յատկացնել Ագաբայի որբերի օգտին, որոնց ծով կարիքներին բաւարարութիւն տալու համար կօպեկներ հաւաքելու հրաւէրներ են կարդացվում, փողոցներ են չափչփվում և դռներ են ծեծվում։

Համեստ խորհուրդ տալով հանդերձ, որ կարդան «Մշակի» նախնացեալ տարվայ № 140-ը, որտեղ ընդարձակ բացատրված է ամեն մի խնդիր, ակնարկ չեմ համարում նորից յիշեցնել հետևեալը. 1) Ագօթատան շինութեան համար թէ ծախսը ասված և թէ ճակատագրաւոր աքսորականների նուիրած գեղանները, որոնց մէկը գնահատվում էր 1 ր.—1 20 կ., թէ պատերազմից յետոյ և թէ այժմ, տարակոյս չը կայ գնահատվելու է 3—4 ր. նրա համար, որ Սախալին այլևս աքսորավայր չէ և էլ չը կան ուժանակիր աշխատութեան մասնակցներ, որ կուշտ հաց ուտելու համար, ազատ մի-ջոցներին 15—20 վերստ տարածութիւնից արևան քրտինքով քարշ տան անագին գեղանը և ծախսն 1 բուբլով։ 2) Ագօթատան համար 300 ր. գնած գետինը՝ Ասարախանի թեմից ուղարկված ալէքսանդրօպոլցի Գիւլումեան քահանայի անունով՝ (որովհետև օրէնքը թոյլ չէր տալիս գնել աքսորվածներից մէկի անունով) քանի որ գտնվում է Սախալին կղզու Ալէքսանդրօվսկի պոստի ամենապաշ կենտրոնատեղում, (կրկնում եմ) և քանի որ այդ պոստը աքսորավայր չէ, այլ ազատ քաղաք. առանց կասկածի կարելի է ասել, որ այդ գետինը գնահատվելու է իր անված գնից 4—5 ստրիճան աւելի բարձր։

Ագօթատան տափը գնված էր երևանցի հանգուցեալ Կոստանդին Եսայեանի փողով, և երբ 1901 թւին կղզաբնակ հայերս ճանապարհ ձգեցինք դէպի հայրենիք, խնդրեցինք նրան՝ որպէս հիմադրի, որ մի յայտնի գումար էլ յատկացնի ագօթատան շինութիւնը լրիւ կատարելու։ Եսայեանը հրահանգեց Թադէոս Մարգարեանին, որ նա 1000 ր. ևս յատկացնի՝ ի հաշիւ Եսայեանին պարտ եղած մի քանի հազարների, որից գնել էր թէ առևտրական մագազինը և թէ տան ամբողջ շինութիւնը։

Բացի ագօթատանը պատկանող փողերը, գեղանները և իրերը, Մարգարեանի մօտն է մնացել Կուկունեանի յանձնած, մեր աշխատութիւններով և, լաւ է ասել՝ մուրացկանութիւնով, տասնեակ հազար վերստերից ձեռք բերված՝ ընթերցարանի համար բաւական թւով գրքեր, «Մշակի» և «Աղբիւր-Տարազի» մի քանի տարվայ առանձին կազմվածներ, անմահ գործիչների՝ հայր Ալիշանի, Գ. Արծրունու, Խրիմեանի և ուրիշների մեծադիր պատկերներ։

Ընթերցարանի գրքերի համար էլ իմ համեստ խորհուրդն է եղել № 140-ում, է և այժմ, քանի որ Սախալինում հայեր չը կան, տեղափոխել Իրկուտսկ քաղաքը, որտեղ կարող են ընթերցանութեամբ օգտվել այնտեղի և շրջակայ հայերը։

Անտարակոյս լինելով միանգամայն, որ երկրորդ անգամ բարձրացված հարցը անուշադրութեան չը պիտի մատնվի, և գլխաւորապէս, որի մասին այսուհետև արդար բողոքներ են բարձրացնելու Ադանայի բաղդահարված որբերն էլ, բարոյական պարտք եմ դնում «Մշակ» թերթի խմբագրութեան վրա, որ չը զլանայ իր կողմից էլ հարց բարձրացնելով, տեղափոխել տալ այդ գումարը Ադանայի որբախնամ ընկերութեան, կամ սինոդի, կամ Ասարախանի հայ կօնս. և կամ որ և իցէ բարեգործական հիմարկութեան գործադիրների միջոցով։

Եւ եթէ այս անգամ էլ շուտափոյթ կարգադրութիւն չը լինի և միջոցներ ձեռք չառնվեն այդ գումարը ստանալու և ցոյց տուած նպատակին ծառայեցնելու, հաւանական է, որ ընդմիշտ կորստեան մատնվեն այնքան նեղութիւններով ձեռք բերված հազարները։ Որովհետև Մարգարեանը,—որի մօտ են գտնվում նաև նուիրատուութեանց ժապաւինեալ մատեանը և հաշուետարակները, որոնք անհրաժեշտ են ճիշդ և կանոնաւոր հաշուետուութեան համար,—լինելով մի վատառողջ մարդ, կարող է յանկարծ կնքել իր մահկանացուն մի յետ ընկած խուլ տեղում՝ Սախալինում, այսինքն աւելի շուտ, քան կը ստացվեն նրանից հաշիւներ։

Այն ժամանակ արդեօք ում վրին ենք փաթաթելու այդ աննեղելի յանցանքը, այդ քար անտարբերութիւնը։ Ասարախանի հոգևոր կառավարչութեան, թէ՞ նոյնպէս ձեռնհաս հիմարկութիւնների, թէ՞ մասնաւոր անձանց... Ժամանակ է լրջութեամբ վերաբերվել այս կարևոր խնդրին։

Մ. Կօրխմազեան

Թիֆլիս, 2 նոյեմբերի

«Մշակի» № 234-ում Ա. Շերինը, քննադատելով Ա. Աբեղեանի «Աշխարհագրութեան դասագիրքը», մի քանի սխալ ակնարկներ է արել և իմ «Աշխարհագրութեանս» տարբերական դասագրքի անունների վերաբերեալ։

Յօդուածի մէջ դուրս է բերված, որ «Աշխարհագրութեանս» դասագիրք կազմողը «Ե. քահ. Երզնկեանն» է, մինչդեռ իմ ազգումս այդ նիւթի վերաբերեալ դասագիրքը միայն ես եմ կազմել 1906 թ. ամառը, որպիսին մի ամփոփ կազմուածք է՝ ընդհանուր Ռուսաստանի, Կովկասի և Հայաստանի աշխարհագրութեան, ինչպիսին պահանջվում է առհասարակ մանկավարժական աշխարհում ընդունված տարրական ուսումնարանի ծրագրով և ոչ թէ մեր Լաբիւրինթոսի կերպարանք կրող ուղեգծով, որի մէջ պէտք է շատ ուղղումներ անել, և որի դէմ էլ այժմ կանգնած են մեր բանիմաց բոլոր ուսուցիչները։ Ես այս դասագիրքը կազմել եմ առաւելապէս Կրուբէր, Դրիգորով, Բարկով և Զիֆրանով յայտնի մանկավարժ ուսուցիչների դասագրքի ոգով, ծրագրով և նիւթով՝ թէ մատչելի լեզուով և թէ մանկավարժական նպատակահաս խելացի միջոցներով, որոնց շնորհիւ մեր երեխաները, տարրական աշխարհագրութեան մասին, իրանց ուղեղում կարևոր տեղեկութիւնները աւելի լաւ կամբարեն իմ դասագրքից, քան թէ՝ նրանցից, որոնք մեր մէջ, վաղուց սկսած, կուսակցական այժով են տարածվել և այժմս էլ տարածվում են, աշակերտների յիշողութիւնը միայն անհաշիւ անունների ու անմարս տեղեկութիւնների տակ ճնշելով և կանոնաւոր զարգացումն էլ խիստ խանգարելով։ Որովհետև անունների սխալ գործածութիւնը զանազան թիւրիմացութիւններ առաջ կը բերէ և իմ դասագրքիս տարածման վրա այլևայլ անպաստ ազդեցութիւն կանէ, այդ պատճառով՝ այդ ուղղումն այստեղ կարևոր համարեցի, խնդրելով միանգամայն իմ անունս իմ ազգիս ուրիշ անունների հետ երբէք չը խառնել։

Երկրորդ նկատողութիւնն էլ «գէյզեր» ազբիւրների մասին է։

Ա. Շերինը ասում է, թէ՝ ինչքան էլ Յ. Յովհաննիսեանը և Ե. (??) քահ. Երզնկեանը իրանց դասագրքերում «հէյզեր» գործածէն, այնու ամենայնիւ՝ այդ տեսակ գործածված բառը քաղաքացիական բնաւորութիւն ստանալուց հեռու է։ Սրանով ես յայտնում եմ, որ թէև իմ դասագրքիս մէջ յիշված է «հէյզեր», բայց ես նոյնը ուղղել եմ, ինչպէս որ 145-րդ երեսի վերնագրերի մէջ է յիշված, ուր տպված է—«Պէտք է լինի գէյզեր կամ կայզեր». այս վերջին տեսակով են գործածել և Մխիթարեան հայրերը։

Իմ կարծիքով՝ տեղերի անունները պէտք է գործածվեն այն ազգի առոգանութեամբ, ինչ ազգից որ սկզբնապէս կազմվել են դրանք. այդ շրջանակից դուրս գալը աւելի քան բռնազբօսիկ ուղղութիւն է։

Ի դէպ՝ յայտնում եմ, որ իմ միակ թերութիւնը ես ընդունում եմ. դա լաւ և գեղաճաշակ նկարների ու քարտէզների բացակայութիւնն է, որը մեր ներկայ արհեստագիտական շրջանում անկարելի է նուրբ ճաշակով լրացնել, որպիսի պակասութիւնը վերացնելու միակ դեղն ու ճարը այդ դէպքում այն կը լինի, որ ուսումնարանը քարտէզներ և տալաս ունենայ։ Ըստ իս՝ եթէ դասագրքերում նկարները փոքր է շատէ գեղեցիկ չեն դուրս բերվելու, աւելի լաւ է, որ դրանք բոլորովին տեղ չունենան, քան թէ՝ լինեն, բայց անճոռնի պատկերներ ներկայացնեն։

Կրկին եմ շեշտում. իմ դասագիրքս պէտք է աչքի առաջ ունենալ միայն տարրական տեսակէտից, այն էլ մեր վեցամեայ ծխական հոգևոր դպրոցների համար. դրանցից բարձր եղած ուսումնարաններին դա հանակնտրօնական դասաւանդման միայն կանոնաւոր հիմք կարող է ծառայել։

Գրիգորիս աւ. քահ. Երզնկեան

Թիֆլիս, 10 նոյեմբերի

Ունենալով մի շարք գիւտեր, որոնց վրա ես աշխատել եմ ամբողջ 16 տարիներ, և ցանկանալով այժմ ձեռնարկել այդ գիւտերից մինի—«էլեքտրական օդանաւի»—կառաւարի կառուցման՝ Պետերբուրգի զինուորական օդագնաց կայարանին հասցնելու համար, սակայն միջոցներ չունենալով, ես ստիպված եմ այս կոչով դիմել այն անձանց, որոնք հետաքրքրվում են օդագնացութեան գործով, օգնութեան գալ և հնարաւորութիւն տալ ինձ գործը աւարտել։ Մի կաղապարը կարժենայ 300 բուբլուց ոչ աւելի։ Կառուցումը կը տևէ 2 ամիս։

Ղ. Գ. Ասլանեան

ԿՈՉ

—

Նուխուց զուրս այլ և այլ քաղաքներում ապրող Նուխեցիների ուշադրութիւնն եմ հրաւիրում յետագայ խիստ կարևոր և միանգամայն անհրաժեշտ հանգամանքի վրա։

Նախ քան հայ եկեղ. ծխ. դպրոցների վերջին փակումը՝ Նուխում ժողովրդ. հանգանակութեամբ սկսվել էր մի հոյակապ շէնք աղայոց հնգամեայ տևողութեամբ դասընթացքով եկ. դպրոցի համար. մեծ եռանդով էր սկսվել դպր. այդ շինութիւնը և նոյն եռանդովն էլ կաւարտվեր անշուշտ, եթէ միայն արգելաւոր հանգամանքները չը լինէին։ Փակվեցին վերջնականապէս հայ եկեղ. դպրոցները. Նուիրատու ժողովուրդը յուսահատվեց. կանգ առաւ շինութեան օգտին սկսված հանգանակութիւնը, և նուխեցոց պարծանք դպր. այդ հսկայ շինութիւնը մնաց կիսատ և պատերը արցունք թափելիս ձիւնի, արևի և անձրևի տակ։ Պիտի խոստովանել, որ աղքատ Նուխեցիք և հարուստ ազուլիսեցիք ոչինչ չէին խնայում դպր. շէնքի կառուցման համար և իրանց առատաձեռն դրամական նպաստներով յօգուտ շինութեան պարզ կերպով ապացուցում էին, որ՝ արդարև գիտեն ուսման նշանակութիւնը և մանուկ սերնդի կրթութեան և լուսաւորութեան գործի անհրաժեշտութիւնը։ Ուստի և օր առաջ փափագում էին տեսնել շինված և աւարտված լուսոյ փարոսը՝ դպր. շինութիւնը։ Սակայն բոլորին պաղեցնող արգելքը վերը ասվեց։ Անցան տասնեակ տարիներ. Նուխու դպրոցական շէնքը մնում է կիսատ. Նուխու հայազն երկսեռ ժանկտին և դպրոցական կիսատ շինութեան պատերը հաւատարպէս դառն արցունք են թափում. մանկտին դպրոցական շէնքի աւեր պատերն է ողբում, շէնքը իր ուսումնածարաւ և ուսումնազուրկ սաներն ողբում։ Կայսերական գահի բարձունքից իրաւունք շնորհվեց ազգին՝ փակված դպրոցի դռները աւելի լայն բանալ։ Ահա չորս տարի է բացված են նաև Նուխու եկեղ. ծխ. երկսեռ դպրոցները. բայց և այնպէս՝ դեռ շարունակվում է նուխեցոց երեխաների և կիսաւեր դպրոցական շէնքի սուգը, ըստ որում տղայքը դպրոցական շէնք չունեն, իսկ շէնքը տղայք չունի. կիսատ է և աւեր է։ Զարս տարի է տղայոց դպրոցը զետեղված է նախկին հին և խարխուլ շինութեան մէջ։ Շինութիւն, որ ամեն րոպէ սպառնում է փլվել և իր տակը ջարդել հարիւրաւոր անմեղ աշակերտների, որոնց ուսումն ու կրթութիւնն է անհրաժեշտ և ոչ թէ փլվող շինութեան ջարդը։ Ի նկատի ունենալով Նուխու դպրոցական կեանքի վերև նկարագրված աղէտալի դրութիւնը և այն հանգամանքը, որ հարիւրաւոր անմեղ աշակերտներ տարիների ընթացքում տուժում են իրանց ուսուցիչների հետ միասին խարխուլ, քանդվող և միանգամայն հակառողջապահական հին շինութեան մէջ ցրտից, խոնաւութիւնից, գարշահոտութիւնից, փոշուց և՝ որ առաւելն է՝ փլվելու վտանգից, վերջնականապէս վճռված է վերացնել թշուառ դրութիւնը և ազատել աշակերտներին սպանիչ պայմաններից.—այն է՝ դպրոցական կիսատ մնացած նոր շինութիւնը շարունակել և աւարտել։ Այս վերին աստիճանի օգտակար նպատակը իրագործելու համար արդէն վաղուց ընտրված է Նուխու ժողովրդի կողմից շինարար մի յանձնաժողով, որը հաստատված է և հաւանութիւն գտած թեմիս բարձր սրբազան առաջնորդից, որից և լիազօրված կառուցանել ու աւարտել դպրոցական կիսատ շինութիւնը ժողովրդական կամաւոր նուիրաբերութիւններով։ Սկսված շինութիւնը աւարտելու համար անհրաժեշտ կը լինի առնուազն 25 հազար ռուբլի։ Ահա միակ դժուարութիւնը և յուսահատեցնող հանգամանքը. որտեղից և ինչ աղբիւրներից ձեռք բերել 25 հազար ռուբլի։ Նախկին բաղդաւոր տարիները անցան գնացին Նուխեցիների վերաբերութեամբ։ Զանազան պատճառներից ստիպված՝ աչքի ընկնող ունևոր թէ ընիկ Նուխեցիները և թէ ազուլիսեցիները հեռացել են օտարութիւն՝ ուրիշ քաղաքներ և դեռ շարունակում են գաղթել։ Նուխու երկու աղքատ եկեղեցիները, երկսեռ հնդամեայ դպրոցները, բարեգործական ընկերութիւնը պահելու և պահպանելու ծանրութիւնը և դժուարութիւնը մնացել է Նուխում ապրող մի բուռը աղքատ Նուխեցիների վրին, որոնց եթէ օգնութեան չը հասնեն ազուլիսեցի ունևորները և դրսեցի Նուխեցիները, ամեն բան կորած է։ Լուրջ և շատ լուրջ խորհրդածութեան նիւթ պիտի լինի Թիֆլիսում, Բագուում, Ռուսաստանում և Անդրկասպեան երկրում ապրող Նուխեցիների—թէ ուսանող երիտասարդների և թէ մեծ մեծերի—համար իրանց ծննդավայր Նուխու հայ դպրոցների յարատև պահպանութեան խնդիրը և Նուխում ապրող իրանց համարիւն եղբայրների և քոյրերի անմխիթար դրութիւնը... Ամեն կողմից շրջապատված այլասեռ, այլակրօն ազգերով, կտրված աշխարհից և ընկած հեռու մի կողմը, ըստ ամենայնի աննպաստ հանգամանքներում վերին աստիճանի աղքատ Նուխեցիք ինչով կարող են պահել երկսեռ դպրոցները, որտեղ մեծամասնութիւնը ձրիաբար է սովորում, ուր մեծ թէ կարողական սեփական ոյժերով շարունակել կիսատ շինութիւնը, որտեղ պիտի տեղաւորվի անմեղ հայ աշակերտութիւնը և ուսում, կրթութիւն, դաստիարակութիւն ստանալով՝ ազատվի խաւարի բարոյապէս սպանիչ ուխտակիչ ճիրաններից։ Այո, օտար քաղաքներում գտնվող սիրելի Նուխեցիք, լուրջ մտածեցէք, համախմբվեցէք, ձեռք-ձեռքի տուէք, խելք-խելքի տուէք և միացեալ ոյժերով օգնութեան հասէք հայրենի դպրոցներին, որտեղ պիտի բարոյական, մտաւորական և հոգեկան սնունդ ստանան ձեր սիրելիների երկսեռ անմեղ զաւակները, որոնք հասունանալով պիտի օգնեն ձեր կեանքը, որ ազատել էք իրանց՝ խաւարից և բարոյական մահից։ Դպրոցական շինարար յանձնաժողովն ունի նախագահ, փոխ-նախագահ, գանձապահ և քարտուղար, բոլորն էլ ընտրված և հաստատված Նուխու երկու եկեղեցիների ծխականների ընդհանուր ժողովից և թեմիս սրբազան առաջնորդից, որից ստացված է երկու թեւամարեալ, ժապաւենեալ և հաստատեալ հաշուեմատեանները, որտեղ պիտի մուծվեն ամենայն ճշդութիւնով յօգուտ շինութեան ստացված դրամական նուէրները և նպաստները և գրվեն շինութեան ծախքերը մանրամասն և մանրազնին կերպով՝ ապագային օրինաւոր հաշիւ տալու համար նուիրատուներին և համայն հայ հասարակութեանը։ Ներկայ աշնանից սկսված է շինութեան կառուցումը. գործը կանգ չառնելու համար անհրաժեշտ է ձեռքի տակ փող ունենալ։ Առ այժմ տեղական ժողովրդի օգնութեամբ շարունակվում է շինութիւնը։ Բայց տեղական ժողովրդի օգնութիւնը հանդէպ 25 հազարի ի հարկէ շատ քիչ է լինելու։ Ուստի շինարար յանձնաժողովին օգնութեան հասնելու բարեսրտութիւնը ունեցէք, որոնց սրտին մտիկ է հայ երկսեռ մանուկների լուսաւորութեան գործը, առաւելապէս Նուխու մանուկների, որոնց վիճակը բացառիկ է։ Դրամական նպաստներ համարձակ կարելի է ուղարկել շինարար յանձնաժողովին Նուխու հայոց հոգևոր կառավարութեան միջոցով և յանձնաժողովի գանձապահ Գրիգորիս Գէորգեանի անունով ուղղակի։ Սիրում եմ հաւատալ և յուսալ, որ այս կոչը անհրաժեշտօրէն արձագանք պիտի գտնի բոլոր Նուխեցիների և Նուխուն քաջածանօթ յարգելի ազուլիսեցիների սրտում և մտքում, որոնք ոչ մի դէպքում չեն խնայի իրանց առատ նուէրները և նպաստները Նուխու եկեղեցիների և դպրոցների բարեզարդութեան և բարգաւաճման համար։ Իսկ եթէ կոչս և խնդրանք խնդրուածքս արժանանայ նաև հայազգի ուրիշ հարուստների քաղցր ուշադրութեան, որ անսպասելի էջ ամենեին, և օգնութեան հասնելով աղքատ հայ Նուխեցիներին՝ միջոց տան աւարտել դպրոցական շինութիւնը և մի քանի հարիւր երեխաներին փրկեն-ազատեն կործանվող դպրոցական հող ու մոխիր կտրած հին շինութեան վտանգից, այժմեանից իսկ կեցցէն յաւէտ այդօրինակ բարեգործ բարերարը, որոնք յաւիտեան կենդանի և անմահ յիշատակ կը թողնեն ուսանող սերնդի սրտին և հոգուն դրոշմված։ Վերջին անգամ խնդրում եմ օտար քաղաքներում բնակվող յարգելի Նուխեցիներին. չը լինի թէ այս կոչը կարդալուց յետոյ անտարբերութեամբ և անգործունէութեամբ (որ միանգամայն անընդունելի է) վերաբերվեն դէպի իրան ծննդավայրի մայրենի դպրոցների սուրբ գործը, արտասուքի դառն կաթիլները թողնելով բաժին աշակերտների, աշակերտուհիների և կիսաւեր շինութեան կիսաւեր պատերի երեսին։ Ասուած մի արացէ՝ Նուխեցիք այդօրինակ յետադէմ քայլ անեն. էլ որ օրվայ համար են օտարութեան մէջ չարչարվում-աշխատում, որ իրանց ազգային թասերն ու նաժուը բարձր չը պահեն, իրանց ծաղկած դպրոցներով չը պարծենան։ Վերջին ժամանակներս Նուխին բաւական թեով ուսանող երիտասարդ և երիտասարդուհի — օրիորդներ և տիկնայք—ոյժեր ունի, որոնք մեծ ծառայութիւն կարող են մատուցանել այս գործին, եթէ կամենան և աշխատեն իւրաքանչիւրը իր շրջանում նպաստներ և նուէրներ ժողովելով դպրոցի շինութեան համար։ Չեմ կասկածում վերջիններս բուռն աշխատութեան մասին։ Տուրքը կարողութեան վրա չէ, այլ սրտի։ Սիրտ և զգացմունք պիտի ունենալ թափանցելու համար ուսումնազուրկ և բարոյապէս մեռնող հարիւրաւոր աղայոց ու աղջկանց դրութիւնը։ Սիրտ և զգացմունք պիտի ունենալ վերստին ծննդեան աւազան պարգևելու տառապող նորածիլ սերնդին։

Առաջն. փոխանորդ վիճ. հ. Նուխու՝
Եղիշէ վ. Ահարոնեան

Նուխի

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱՀԱՍՈՒԹԻՒՆԻՑ
12 Նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բարձրագոյն հաստատված մինիստրների խորհրդի որոշմամբ կարգադրված է Արաբսթումանի հանքային ջրերը իրանց հողերով դնել առևտրի մինիստրութեան տնօրինութեան ներքոյ, թողնելով գինուորական մինիստրութեանը սոսկ Արաբսթումանի զինուորա-բժշկական հաստատութիւնների կառավարութիւնը։

Օրվայ ընթացքում խօլերայով հիւանդացաւ 1 հոգի. հիւանդների թիւն է 65։

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը անհրաժեշտ դտաւ իր տնօրինութեան տակ գտնվող կրթական հաստատութիւնների աւարտական վկայականների, թղթերի ու բլանկների տպագրութիւնը և պահպանութիւնը յանձնել պետական արժեթղթեր պատրաստող էկսպեդիցիային, որպէսզի կեղծիքներ չը լինեն։

Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը, համաձայն անդրկովկասեան երկաթուղիների կառավարչի առաջադրութեան, սահմանված կարգով միջնորդութիւն է յարուցում, որ թոյլատրվի պարսկական ապրանքները փոխադրել Զուլֆայի վրայով Բաթում և Զուլֆայով Փոթի, ինչպէս ամենակարճ ճանապարհ պարսկական ապրանքները Ռուսաստան և Եւրոպա փոխադրելու գլխաւոր կէտեր։

ՆՈՎՈԶԵՐԿԱՍԿ։ Երէկ գիշեր Լիխոյ կայարանում տեղի ունեցաւ գնացքների ընդհարում. 10 վագոն ջարդվեցին, սպանվեցին 2, վիրաւորվեցին 9 ճանապարհորդներ։

ՄՈՍԿՎԱ։ Բացվեց մեղուաբոյծների համառուսական համագումարը։

ՍՄՈԼԵՆՍԿ։ Լէշակով գիւղում գտնվեց շվեդական արծաթէ դրամների պահեստ։

ՎԻԵՆՆԱ։ Ծպտեալ կերպով եկաւ դանիական թագաւորը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԹԻՖԼԻՍԻ ՃԻՒՂԸ
Արժեթղթերի կուրսերը
13 Նոյեմբերի

1 կ. ներք. փոխ. խ. տոմս.		455 ր.	— կ.
II » » »		343 ր.	— կ.
III Աղնւակ. բանկ.	»	305 ր.	— կ.
4— Պետական ռենտա		88 ր.	75 կ.
4% Պետ. Աղնւ. բանկ գր. թ.		95 ր.	87 կ.
5½% » » » »		— ր.	— կ.
4% » » » »		— ր.	— կ.
3½% » » » »		— ր.	— կ.
5% Գիւղ. հող. բանկ. վկ.		— ր.	— կ.
5½% » » » »		— ր.	— կ.
4% » » » »		— ր.	— կ.
5% Ներքին փոխատ. 1905 թ.			
	I հրատ.	101 ր.	— կ.
5% »	II հրատ.	101 ր.	— կ.
5% Արտաք. »	1906 »	101 ր.	— կ.
5% » »	1908 »	101 ր.	— կ.
4% Պետական գանձաբ.		100 ր.	— կ.

Օտարերկրեայ դրամների կուրսը

Լօնդոն 10 ֆ. ստեր.	94 ր.	95 կ.
Բերլին 100 մարկ	46 ր.	35 կ.
Պարիզ 100 ֆրանկ	37 ր.	73 կ.
Թուրիզ 100 դրամ	19 ր.	— կ.
Կ. Պոլիս 1 լիրա	8 ր.	69 կ.

ԿՈՉ

Հոկտեմբերի լոյս 18-ի գիշերը Թիֆլիսի նահանգի Սուրամ աւանում հրդեհից այրվեց ամբողջ հրէական թաղը և հայոց թաղի մի մասը։ Այրվեցին 120 տներ և աւելի քան 130 ընտանիքներ մնացին առանց ապաստանի, հագուստի և կերակրի, որովհետև ամբողջ գոյքը կրակի ճարակ դարձաւ։ Նոյնպէս այրվեցին 3 աղօթատներ և հրէաների 2 դպրոց։ Ուտելու հաց չը կայ, չը կայ տեղ Աստուծուն աղօթելու համար, չը կայ տեղ մանուկներին սովորելու համար։ Բարի մարդիկ, հրկիզեալների անունից դիմում ենք ձեր գթասրտութեանը՝ խնդրելով որ անսաք հրկիզեալների վշտին ու յուսահատութեանը և ձեր կարողութեան չափ տուած լումայով թեթևացնէք թշուառների տանջանքը, յիշելով որ իւրաքանչիւր տուրք բարի է։ Նուէրներն ուղարկել Թիֆլիսի նահանգի Սուրամ աւանը ի նպաստ հրկիզեալների նուիրատուութիւններ ժողովող կոմիտէին. (Комитетъ по сбору пожертвованій въ пользу погорѣльцевъ, въ Сурамѣ). (հ.ու.շ.) 3—3

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆԻ
Հիմված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Յ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ—առավաւոտ—8½—11½ ժ., պլոմբներ և արհեստական ատամներ։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒՂԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու. վեներակ., վիրաբուժութեան և մկդասեռ. հ,
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Օ. Վ. ԴԵՑԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Օ. Վ. ԴԵՑԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—6—6½ ժ մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Վճարը 50 կ.։ Զքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Ձմեռային երթևեկութիւն)
(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ պօսաշար գնացքը 11 ժ. 40 ր. գիշեր., Գանձակ է հասնում 6 ժ. առաւօտ., Եւլախ՝ 8 ժ. 9 ր. առաւօտ., Հաջի-Կարուլ՝ 1 ժ 12 ր. կէսօր., Բալաջարի՝ 4 ժ. 45 ր. ցերեկ., Բագու՝ 6 ժ. 9 ր. երեկ.։ Մարդաշար գնացք № 6՝ 8 ժ. 11 ր. երեկ., Գանձակ է հասնում 2 ժ. 32 ր. գիշեր., Եւլախ՝ 4 ժ. 41 ր. գիշեր., Հաջի-Կարուլ՝ 9 ժ. 12 ր. ցերեկ., Բագու՝ 2 ժ. 10 ր. ցերեկ.։ Խառն գնացք չորրորդ կարգի վագոններով, միայն ըստ հարկի կարևորութեան, 7 ժ. 3 ր. առ., Բագու է հասնում 11 ժ. 43 ր. կէսօրվայ։ Արագացված գնացք № 12՝ 10 ժ. 11 ր. երեկ., Գանձակ է հասնում 4 ժ. 13 ր. գիշեր., Եւլախ՝ 6 ժ. 8 ր. առ., Հաջի-Կարուլ՝ 10 ժ. 32 ր. ցեր., Բալաջարի՝ 1 ժ. 45 ր. կէսօր., Բագու՝ 2 ժ. 20 ր. ցերեկ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պօսաշար 1 ժ. 37 ր. գիշ., Ալէքսանդրօպոլ է հասնում 12 ժ. 21 ր. ցեր., Էջմիածին կայարան՝ 5 ժ. 30 ր. եր., Նախիջևան՝ 11 ժ. 30 ր. գիշ., Զուլֆա՝ 1 ժ. 4 ր. գիշ.։ Մարդաշար ապրանք.՝ 4 ժ. 20 ր. ցեր., Ալէքսանդրօպոլ է հասնում 3 ժ. 16 ր. գիշ., Էջմիածին՝ 8 ժ. 46 ր. առ., Ուլուխանլու՝ 9 ժ. 16 ր., Երևան՝ 10 ժ. 14 ր. առ., որից դէնը այլ ևս չէ գնում։ Խառն գնացք չորրորդ կարգի վագոններով՝ ըստ հարկի կարևորութեան՝ 5 ժ. 8 ր. ցեր., Ալէքսանդրօպոլ՝ 6 ժ. 56 ր. առ., որից դէնը այլ ևս չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ մարդաշար № 7՝ 8 ժ. 10 ր. երեկ., Բաթում է հասնում 9 ժ. 42 ր. առ.։ Պօսաշարի՝ 9 ժ. 42 ր. երեկ., Բաթում է հասնում 11 ժ. 48 ր. առ.։ Մարդաշար № 5՝ 1 ժ. գիշ., Բաթում է հասնում 2 ժ. 8 ր. ց.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՄՆՈՒՄ

ԲԱԳՈՒՄԻՑ՝ պօսաշար գնացքը 8 ժ. 42 ր. առաւ., մարդաշար № 5՝ 12 ժ. 11 ր. գիշ., Արագացված № 11՝ 10 ժ. 47 ր. առ.։ Վերջին գնացքը չէ գնում Բաքուն։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ մարդաշար № 6՝ 7 ժ. 21 ր. երեկ., պօսաշարի՝ 10 ժ. 40 ր. երեկ., մարդաշար № 8՝ 12 ժ. 17 ր. կէսօրին։ Վերջին գնացքը Բագու չէ գնում։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պօսաշար 6 ժամ 19 ր. առ., մարդաշար-ապրանքաշար՝ 6 ժ. 44 ր. երեկոյան։

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ խառն գնացք 4-րդ կարգի վագոններով՝ 4 ժ. 48 ր. գիշերվայ։

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ
առանձնապէս ՍՏԱՄՈՒԱՅԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր { 12—1 ժ. առաւ. 5—6 ժ. երեկ.
Միքայէլեան փող., № 36, տ. Ճաւճանիձէի։
(օ. մ.) 1216. 100—35

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Ներքին և ջղային հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր { առաւօտեան 9—12 ժ. երեկոյեան 5—7 ժ.
Միքայէլեան փողոց, № 27.
(ա. օ.) 1087. 100—24

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Սիֆիլիս, միզասեռական, վենեռական և կաշուի հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր { առաւօտեան ժ. 12½—2. երեկոյեան ժ. 5—7.
Կիրակի օրերը միայն առ. ժ. 11—12½.
Հասցէն՝ Մօլոլակ, Բէհրութեան փ., № 33.
(ա. օ.) 1044. 100—33

ԲԺԻՇԿ
Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ
Մասնագէտ սիֆիլիս, վենեռական, միզասեռական և կաշուի հիւանդութիւնների։ Հիւանդների ընդունելութիւնը՝ առաւօտ. ժամը 9-ից մինչև 10-ը, երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը։
Կէնիեվսկայա փ., № 6, «Վէտցէլ» հիւրանոցի մօտ։ (ե. հ. շ.) 955. 100—24

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ

Մողնու եկեղեցու ծխականները հրաւիրվում են երկրորդ ժողովի, կիրակի, նոյեմբերի 15-ին, ցեր. ժամը 12-ին, դպրոցին և եկեղեցուն վերաբերեալ կարևոր խնդիրների մասին խորհրդածելու։ Ժողովի որոշումները վերջնական կը լինեն։

Ի կողմանէ ծխ. հոգաբարձութեան՝
Նիկ. Տէր-Ղևոնդեան
(հ. շ.) 1219. 2—2

Լոյս տեսաւ և ծախվում է
Ալէքսանդր Մամիկոնեանի
ԳԱՐՆԱՆ ԾԱՂԻԿՆԵՐ
Բանաստեղծութիւններ
Գինը 20 կոպ.։ Կարելի է գնել Թիֆլիսում «Փարոս», «Գուտտենբերգ» և «Կենտրօնական» գրավաճառանոցներում։
Գումարով գնողներին 25% զեղչ։
Պահեստը՝ Тифлисъ, Никол. мостъ. Н. Теръ-Гевондянъ.
(շ. հ.) 1218. 5—2

ՀՕՆՕՐՐԷԻ (ՏՐԻՊՊԷՐ) ԴԷՄ
ՆՈՐ-ՄԻՋՈՑ
„SALO — ՊԻՋԻԼԻՆ“
Ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իբրև հաստատուն միջոց։ Գործադրելու ձեռնարկը կցված է արկղիկին։ Իսկականը միատեսակ արկղիկներում, հատը՝ 1 ր. եւ 1 ր. 80 կ.։
Միաժամանակ լաւ է ներգործում թէ սուր եւ թէ յարատեւ բնոյթ ունեցող գեպբերում եւ կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայատամ ընթացքը։
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ՝ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека Б. Конгейма.
Ուղարկվում է վերադիր վճարով։ Ճանապարհածախքը պօսաշարի սակադնով։
Գտնվում է Կոկ. Ընկ. գեղային ապրանքների վաճառանոցում։
(շ.) (II. 124817) 540. 0—8

ԾՔԵՂ! ԱՄՈՒՐ!
=ԿՕՇԿԵՂԷՆ=
Ս.-Պետերբուրգի Մեխանիկական
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Իսկականը միայն այս դրոշմով
ФАБРИЧНОЕ КЛЕЙМО
С.ПЕТЕРБУРГЪ.
ՆՈՅՆՊԷՍ ԵՒ ԿՐԷՄ ԵՒ ԱՊՐԷՏՈՒՐԱ
ԳՏՆՎՈՒՄ ԵՆ ԲՈԼՈՐ ԼԱՒ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒՄ
Մեծաքանակ վաճառքը կատարում է
ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
„ТРЕУГОЛЬНИКЪ“ ֆիրմայով
182. 0—33